

ՈՒՋԱՅԻ ՄԻՋԱԴԵՊԻՆ ԳԾՈՎ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԹՈՐԻԿԸ ԿԸ ՅԱՄԵՆԱՅ

Ուզայիի մէջ նախանշան օրուան ցոյցին եւ բախումներուն, ինչպէս նաեւ Ուզայիի կամուրջին գծով ամբաստանութիւններու փոխանակումը շարունակուեցաւ երէկ Հրպայիլի եւ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի պլոքներու անդամներուն միջեւ։ Զարուսակուեցան նաեւ այդ դէպքերուն գծով երեսփոխաններու եւ քաղաքական կողմերու յայտարարութիւնները։

ՀԵՐԱՊԵՏՈՒՄ ԵՒ ԱՊՐԱՆԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍՆԵՐԸ

Երեսփոխան Ամար Մուսաուի երէկ տուաւ մասնով ատուի մը, որուն մէջ Ներքին Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէն Մարուան Ջէյնէն պահանջեց հաղորդագրութեամբ մը յայտարարել, որ անձիշէ է իր նախկին այն յայտարարութիւնը, թէ հրահանգած է ձերբակալել Ն. Ա. Ուժերու տարբեր խոչնդաններու անդամներուն նկատմամբ անձերը, նկատի ունենալով որ պիտի նուորական դատախաչ Մարուան Ջախուր հաստատած է, որ ցուցարարները նման բաներ չեն քած։

Ապահովական կարելու կառոյց գլխաւորող բարձրաստիճան պետական պատասխանատուի վախճ չէ անձիշէ տեղեկութիւններ տալ եւ նման ընթացք ունենալ «բացի եթէ ան իր պաշտօնը իր նշանակումին աջակցած կողմին ծառայող քարոչական բեմի կը վերածէ»։

Երեսփոխան Մուսաուի երէկ տուաւ մասնով ատուի մը, որուն մէջ Ներքին Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէն Մարուան Ջէյնէն պահանջեց հաղորդագրութեամբ մը յայտարարել, որ անձիշէ է իր նախկին այն յայտարարութիւնը, թէ հրահանգած է ձերբակալել Ն. Ա. Ուժերու տարբեր խոչնդաններու անդամներուն նկատմամբ անձերը, նկատի ունենալով որ պիտի նուորական դատախաչ Մարուան Ջախուր հաստատած է, որ ցուցարարները նման բաներ չեն քած։

հելու իր նախապիւծներուն, բայց նորութիւնը այն է, որ այդ խորհուրդը այժմ վերածուած է նաեւ քաղաքական – քարոչական միջոց, եւ անոր տէրը կ'ընէ կը գործածէ այլ կողմերու վրայ իր յարձակումներուն եւ զբաղմունքներուն համար, ըսաւ ան։ Մուսաուի վերահաստատեց, որ խորհրդարանն ու ծրարները հրաժարած էին Ուզայիի մէջ կամուրջի կառուցումին։

Երեսփոխան Հիւսէյն Համաւան նկատել տուաւ, որ այս հարցին շուրջ, խնդիր է հարց տեղծելու քայլը կանխամտածուած էր, որովհետեւ Էլիսաբէթ Թրագոր տարիներ է վեր քննարկումի նիւթ էր։

Վերջին օրերուն բազմաթիւ հաղորդակցութիւններ կատարուած էին վարչապետը համոզելու, որ հրաժարի կամուրջի հիմնարկէքէն, բայց ան անպիշող մնաց, իսկ երեսփոխան Ռաիխ Իսո անցեալ Կիրակի շրջանին բնակիչները մակաբռնութիւն անուանեց պատերազմի գրգռելու համար, նաեւ անարգելով դիմադրութիւնն ու Հրպայիլին։

Հրպայիլ կ'օժանդակէ բարգաւաճումին, չոր կը խափանէ կառուարութիւնը Պալայէք – Հերմէլի, հիւսիսի եւ հարաւի մէջ, ըսաւ Համաւան, հաւատելով, որ Հարիրի կը պատրաստէ օրինագիծ մը, որուն միջոցաւ Մոյիսէրի պէս ընկերութիւն մը պիտի օգտագործէ Ուզայիի կայունութեան իրաւունքները համար։

Երեսփոխան Մուսաուի երէկ տուաւ մասնով ատուի մը, որուն մէջ Ներքին Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէն Մարուան Ջէյնէն պահանջեց հաղորդագրութեամբ մը յայտարարել, որ անձիշէ է իր նախկին այն յայտարարութիւնը, թէ հրահանգած է ձերբակալել Ն. Ա. Ուժերու տարբեր խոչնդաններու անդամներուն նկատմամբ անձերը, նկատի ունենալով որ պիտի նուորական դատախաչ Մարուան Ջախուր հաստատած է, որ ցուցարարները նման բաներ չեն քած։

միջազգային ուժերու շղթայապէրծած նմանօրինակ արշաւին, որովհետեւ անոնց միեւնոյն տեւն սաստկանալը պուզադիպութիւն չէ, այլ յստակ պատգամ։

Ընդունելի չէն պրպարտութիւններու եւ սուրբերու այս արշաւները եւ կը մաղթենք, որ «Յիւզըր» պատկերասփիւռը միջկիրաններն հարցեր ստեղծելու միջոց չդառնայ, մանաւանդ որ մենք նման հարց չենք ուզեր. մենք պաշտպանած ենք այս երկիրը, ըսաւ ան։

Երեսփոխան Ապուալա Քասիր ըսաւ. մենք ենք օրէնքը գործադրել պահանջողը, օրէնքին նախանձախնդրը Ուզայիի բնակիչներն ու Հրպայիլի մասին, Ղոլմիներու, Պասաի եւ ողջ մտ երեսփոխանները իրենք արգելք հանդիսացան օրէնքը անտեսող կամուրջի հիմնարկէքին, որ ինքնին օրինականութիւնն են։

Ստորամբանական է Հրպայիլի ուղղուած քարգաւաճումը խափանելու ամբաստանութիւնը, որովհետեւ ան էր իրաւապաշտը շրջաններու բարգաւաճումը պահանջողը, ըսաւ ան։

«Անօրէն պատկարարութեան, որ միջկիրաններն հարցեր կը հրահարէ եւ երկիրը քանձնէրու կը վերածէ իր շահերը պահովելու կամ միջազգային կողմերու գոհունակութիւն պատճառելու համար», ըսաւ ան։

ԻՏՕ ԵՒ ՀԱՐԻՐԻԻ ՀԱՄԱԿԻՐ ԵՐԵՍՓՈՒՍՆԵՐԸ

Երեսփոխան Ռաիխ Իսո երէկ պատասխանեց խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի նախանշան օրուան քննարկումներուն, ըսելով, որ «մենք ենք իրենց անցած ժողովուրդի իսկական ներկայացուցիչները, անոր կամքին հարապատ»։

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

• Ծամբորդութեան պատճառով, 140 քառ. մետր տարածութեամբ, գեղատեսիլ դիրք, բնակարանի, գրասենեակի կամ դարձան ստան յարմար, Պառնոզի, «Կալէրի Իթթի-հատ»ի մօտ, հեռ. 03-226435 եւ 01-899718:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԷ

• Տիար Կարպիս Գասպարեան եւ ընտանիք շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց կնոջ, մօր եւ հարազատին՝ ԱԼԻՍ ԳԱՄՊԱՐԵԱՆԻ մահուան սուգին։

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

• Պուրճ Համուտի մէջ, 100 քառ. մետր, վերելակով եւ կառուցուած ժողովուրդի։ Հեռ.՝ 03-609217 պր. Ծարպել։

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

• Այնճարի մէջ։ Հեռ. 03-648202:

ԿՈՒՉՈՒԻ

• Կարպետ ոսկերիչ մը. հեռ. 03-882947:

ԿՈՒՉՈՒԻ

• Հաստատութիւն մը կարիք ունի երիտասարդ վաճառող պաշտօնէայի մը։ Անգլերէն եւ ֆրանսերէն գիտնալը պայման։ Նաեւ պէտք է ունենայ ինքնաշարժ վարելու արտօնագիր։ Դիմել՝ հեռ. 01-262653 քիւիւ։

ՍՊՈՐՏ

Արդարութեան նախարար Սամիր Ժըքը ըսաւ, որ Լիբանանի վիճակը բարելաւելու կարգադրուած է անձի միջոցառում կը բախի պայքարներու եւ վէճերու, որոնց միակ նպատակը խափանարարութիւնն է։

Ֆաղթականներու նախարար Մարուան Համաւան ըսաւ, որ երկրին նկատմամբ վատատեսութիւնը պահանջարկով ճիշդ է եւ պէտք է գործադրել, ըսաւ Իսո, հաստատելով, որ ինք ոչ մէկուն մակաբռնում անուանած է։

Երեսփոխան Մուսաուի Համաւան ըսաւ, որ Ուզայիի մէջ պատահածը ապօրինի է եւ ոչ մէկ ձեռով կարելի է արդարացնել. անոր նպատակն էր խափանել կամուրջի կառուցումը եւ ուղղակի վնաս կը պատճառէ անգործներուն։

Երեսփոխան Ժիհաւ Մամաւանը յայտնեց Ուզայիի դէպքին համար, պահանջելով, որ բոլոր կողմերը ենթակալ մնան օրէնքին։ Երեսփոխան Իպրահիմ Պասաի ըսաւ, որ պատահածը արհեստական ժխտ է, որուն նպատակն է քողարկել երկրին դիմագրւած ելեւմտական լուրջ դժուարութիւնները։

ԹԵՐ ԵՒ ԴԵՍ ԿԵՅՈՒՄԵՆԵՐ

Պետական նախարար Փիեռ Հըլու ըսաւ, որ սկզբունքով պէտք է գործադրուի Ուզայիի կամուրջի ծրագիրը, բայց հարցը այն է, որ վարչապետ Հարիրի իր բանանցիները վարժեցուց անտաճեռն հատուցումներու, ինչպէս որ պատահեցաւ բազմաթիւ շրջաններու մէջ։

Ինչ ու Հայմիէի եւ Էշրեֆիի կամուրջներու կառուցումին համար ոչ մէկ հատուցում կատարուեցաւ։ Որովհետեւ քրիստոնէայի ներկայացուցիչները, անոր կայունութեան հարց տուաւ ան։

ԱԿՆԱՐԿ

ԱՆԵՆԴՈՒՆԵԼԻ Է ԹՈՒՐԲԻՈՅ ՀԵՏ ԱՌԱՆՑ ՆԱՍՎՊԱՅՄԱՆԻ ԵՐԿԵՕՍՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան մտահոգիչ յայտարարութիւններ կը կատարէ հայերէն լրագրութեանց ծիրէն ներս։ Անշուշտ ան սկզբունքով կ'արտայայտէ հայրենի իշխանութեանց տեսակէտը, առ այդ խօսքը կը վերաբերի ամբողջ իշխանութեան պետին։

«Մէկ պատին, մէկ մեխին» մրճահարելու այս քաղաքականութիւնը սկսաւ դրսեւորել իր քրոջը շուրջը, անուղղակիօրէն առիթ ընծայելով, որ անիկա ծաւալի, բայց ի վերջոյ սանձուի հայ ժողովուրդի իրատ մերժումով, Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին հաստատուեցաւ։ Տակաւին երէկ, Երոզայի մէջ գործող հայկական 11 միութիւններ ու հիմնարկներ իրենց ձայնը կը միացնէին Երոզայի կազմակերպչական Միութեան ու միացեալ յայտարարութեամբ մը հանդիսակալու գային՝ խստիւ մերժելով այսպէս ըսած Յանձնաժողովի ապագային անաշարժութիւնը։

Այս անգամ մտահոգութեան առիթը կու տայ հայերէն լրագրութեանց գծով նախարար Օսկանեանի անհասկնալի յայտարարութիւնը, զոր ան կատարեց յաջորդաբար երկու առիթով Պոլսոյ մէջ (նախանշեալ օր եւ երէկ), որուն համաձայն՝ «Հայաստան պատրաստ է Թուրքիոյ հետ առանց նախապայմանի երկխօսութեան սկսելու»։

Եթէ ճիշդ է թրքական մամուլին հրապարակած այս տեղեկութիւնը, ապա անիկա ոչ միայն մտահոգիչ է, այլեւ անընդունելի, որովհետեւ գիտենք, ազգովին, որ Հայաստան չի կրնար, իրաւունք չունի առանց նախապայմանի երկխօսութեան ձեռնարկելու Թուրքիոյ հետ։ Հարցը ազգային քաղաքականութեան ինքիք է եւ ինչ ալ ըլլան պայմաններն ու պատճառները, կարելի չէ պայն դնել դիւանագիտութեան կշիռին։ Ճիշդ է, որ Թուրքիա, իր կարգին, որեւէ նախապայման պէտք չէ ունենայ, բայց ատիկա Թուրքիոյ հարցն է եւ ինք կ'որոշէ իր կեցուածքը։

Գիտենք որ բազմաթիւ յայտարարած ենք, որ ի վերջոյ օր մը հայր եւ թուրք իրարու ձեռք պիտի սեղմեն, որովհետեւ աշխարհագրական տուեալներով երկրներ ալ դատարարուած են բարիդրացիութեան, բայց ատիկա չի կրնար ըլլալ ի հաշիւ հայ ժողովուրդի իրաւունքներուն։

Հայերէն լրագրութեան քննարկումն յարաբերութիւններու մակարդակին հասնելու ճանապարհը անշուշտ երկար է եւ դիւրին գործընթաց չէ։ Անիկա կը լուծուի հանգրուան առ հանգրուան, փոլային հոլովոյթով։ Իսկ իբրեւ առաջին հանգրուան եթէ նկատի ունինք հայերէնը երկխօսութեան ձեռնարկումը, ապա անիկա եւս կարելի չէ առանց նախապայմանի. Անգարա առաջին հերթին պարտի վերցնել Հայաստանի պաշարումը եւ անոր դէմ հաստատած անպարկուտ, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցով պարտի մնալ չէպէք։

Աւելի ուշ, յաջորդող հանգրուաններուն, երբ աւարտած կ'ըլլան այդ բանակցութիւնները, երկխօսութիւնը, Թուրքիա այս անգամ պարտի ուղղակի հաշուետուութեան նստիլ հայ ժողովուրդին հետ՝ Հայկական Յեղափոխութեան եւ Արեւմտահայաստանի բոնազրեալ հողերուն անկորնչելի թրթածարներուն գծով, պարտի կատարել իր բոլոր՝ հատուցումները, եւ այն առեւն ամբողջացած կ'ըլլայ հայերէնը յարաբերութեանց «հաղաղութեան» գործընթացը։ Առայժմ սակայն Թուրքիա ոչ միայն հեռու է այդպիսի ընթացք որդեգրելէ, այլեւ յամառօրէն կը շարունակէ իր ուրացման, խեղաթիւման ու հակահայ միեւնոյն քաղաքականութիւնը։

Ուստի կ'ակնկալուի հայրենի վարիչներէն, որոնք այլապէս արտաքին քաղաքականութեան մէջ կ'որդեգրեն բաւական առողջ ընթացք, որ հայերէն լրագրութեանց իրատ կարելու եւ վգայուն թրթածարին գծով փորձեն ըլլալ անելի արմատական եւ ուղղակի, որովհետեւ այդպէս կը պահանջեն համազգային մեր շահերը։

ՀԻՍՏ ՎԱՐՃՎՊԵՏԵԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆԲ

Կիրակի, 30 Յունիս 2002ին, Լիբանանի Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացք Ս. Պատարագի պիտի կատարուի հայրապետական մաղթանք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գահակալին։

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

օծման եւ գահակալութեան 7րդ տարեդարձին բարեբախտի առիթով։

Սիրով կը իրաւիցենք մեր ժողովուրդի սիրեցեալ գաւազները ճերմակ ըլլալու Ս. Պատարագին եւ հայրապետական մաղթանքին միասնաբար աղօթելու եւ հայցելու բարձրեալ Աստուծոյ քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ երկարամեայ բեղուն գահակալութեան վասն պայծառութեան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ անասանութիւն Հայց. Առաքելական Ս. Եկեղեցոյ։

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Նազարէթ Սաղպագարեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Ժան Սաղպագարեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Շահէ Սաղպագարեան եւ զաւակուհին
Տէր եւ տիկին Ժորաբ Սէրայտարեան
Տէր եւ տիկին Սարգիս Նաբեկաթեան
Ստեփան եւ Ծովիկ Աւագեան
Տէր եւ տիկին Ժան Հայկ Որբերեան
Աղապահեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գովեն իրենց մօր, մեծ մօր, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԱՐԱՔՍԻ ՍԱՂԱԶԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Խարբերդ, 1904ին)

Մահը։ Երեւանի Կոմիտասի անվան համալսարանի Կրթական-մեթոդական կենտրոնի տնօրէնի պաշտօնէն թողնելու 28 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին Իմէլի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեանի մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտէ Ազգային գերեզմանատունը։

• Ներկայս ընդունիլ իբրեւ մահալի։

• Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին պակին՝ Ժան Սաղպագարեանի բնակարանը Սալի Պատուի, «Սուրի» շէնք, Ուրբաք 28, Շաբաթ 29 եւ Կիրակի 30 Յունիսին։

SHOWER CABINE CENTER

Այլազան մոտէլներ, պատրաստ եւ ապարանքի վրայ։ 2անգամ չափերով կազմուած, ալիւմինիում եւ փլասթիկ Ս. Ս. Ս. Ս. եւ ապակի նկարով։ Կառուցուած է լոգանքի յատուկ խցիկներու համար Bac a Douche et Baignoire։ Մատչելի գին, տեղադրելը՝ ձրի, երաշխատրուած աշխատանք։

Դիմել՝ ԹԱՐԵՆՍ ԵՒ ՍԱՅՅԵՆ Հաստատութիւն, Սեւ Էլ Պառնոզի, Բաւիլ Շամուն պողոտայ, հեռ. 03-392088, 03-476018:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 29 Յունիսի առաւօտեան ժամը 9:30ին, հեռուտեսիլի New TV կայանէն դիտեցէք Համազգայինի «ԿԱՐԿԱՉ» Մանկական, Պատանեկան եւ Երեց Պատանեկան երգչախումբերուն համերգը, ղեկավարութեամբ Չաքար Բէշիշեանի։

ԱՃՃԱՆ ԹՈՒՐԻՉ 2002Ի ԾՐԱՎՊՈՅՑՆԵՐ

• ԱճՃ Շաբաթ Պոլսոյ մէջ շրջապատուով 8 օր Կիպրոս, Ռոտտա, Աթէն, 31օրական կղզիները առանց վիզայի 380\$։

• Varna 8 օր 280\$, 15 օր 385\$, պանկայօճայաճաշով։

• Կիպրոս 4 օր 195\$, 7 օր 235\$, ցայտնով, ցայտնաշ + տոմս։

• ԱճՃ Երկուշաբթի 8 օր Հայաստան 375\$, 15 օր 530\$, պանկայ, ցայտնաշ, օդանաւի տոմսակով։

• 8-29 Յունիս եւ 9-30 Օգոստոս, աշակերտական, սկստական եւ երիտասարդական, օրական 4 անգամ ուտելով, Սեւեռն եւ Արգոնի մէջ տարբեր պոլոսներով, տոմսը, վիզան + տուրքերով 399, 499, 555, 780\$, բոնիքը Հայկայն, իշխանակի նուերներով։

• 8 օր Եալթա՝ Սեւ նով 575\$ 15 օր 820\$։

2002ի ճորտը օրը պարզեցով

• ԱճՃ Կիրակի Դամասկոս, Սեւեռնայ, Պոլսոյ 12\$։

• Էտնը, Արգ, Ֆարայա 8\$, Սայտա, Սուր, Կանա 8\$։

• ԱճՃ առտու եւ իրիկուն Հայկայ 9\$, Դամասկոս 6\$ ճորտը պարզեցով։

• Վարձու կու տանք մեծ եւ փոքր օրը պարզեցով։

• ԱճՃ Շաբաթ Լաթաքիա 5 աստղանոց պանկայ 3 օր 75\$։

ԱՃՃԱՆԻ ԾՐԱՎՊՈՅՑՆԵՐ ԴԵՊՈ ՀԱՅՍՏԱՆ

• 8 - 8 - 15 Յունիս, Բ - 12 - 19 Յունիս առաջնակարգ պանկայ, 5 օր պոլոսներ, ձաշկերոյ-պարահանգէն, իշխանակի նուերներով, ձրի վիճակահանութիւն, սկսեալ 575 \$ են, ներառեալ վիզան եւ օդակայանի տուրքերը։

ԱՃՃԱՆ ԹՈՒՐԻՉ հեռ. 01-261177 - 240654 - 03-233978 - գիշերը՝ 01-258887:

ԼՕՍԻ «ԿԱՐՍ» ՄԵՆՍԵՆԵՐԻ (ԷՇՐԵՅԻԷ)

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՇ. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 2 Յունիս 2002, առաւօտեան ժամը ճիշդ 9:30ին, Ազատամարտ ակումբի «Չուխատրեան» սրահին մէջ։

ՍԱՆՕՔ. ԸՆԿԵՐՈՒԿՆԵՐՈՒՆ ԸՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ խիստ փափաքելի է։

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

27 Յունիսի տեղական մամուլի գլխավոր խորհրդակցությունը կը վերաբերին Ուկրաինայի կամուրջի հարցերուն, տեղի ունեցած իրադարձութիւններուն եւ դէպքերուն:

«Նահար» օրաթերթը այս մասին գրած է. «Հարիւրի եւ Հրպայի միջեւ կամուրջը քանդուեցաւ. խոշտանգում եւ քարկոծում պատճառ դարձան, որ կամուրջի ծրագիրը առկա չի. փոխարէն ամբաստանութիւններ երկու կողմերուն միջեւ»: «Անուար»-ի համաձայն, «Ուկրաինի դէպքերէն ետք Հարիւրի եւ Հրպայի միջեւ քանդուած կամուրջը դիմադրութեան հոշակը կը խեղափոխուի եւ Հրպայի կամուրջը քանդուած քանի մը միլիոն տոլարի համար ճնշում բանեցնելով: Հրպայի վրայ տեղեկատուական պաշտօնական յարձակումը եւ ամերիկեան ու իսրայէլեան ճնշումները միեւնոյն ատեն տեղի կ'ունենան»:

«Մաֆի»-ն այս մասին գրած է. «Հարիւրի եւ Հրպայի ճակատեցան փողոցին մէջ եւ տեղեկատուական միջոցներով. Ուկրաինի ճակատումը հետզհետէ մարելու ընթացքին մէջ մտաւ»: «Քիֆահ Արապի»-ի համաձայն, «Ուկրաինի կամուրջը քանդեց Հարիւրի եւ Հրպայի միջեւ կամուրջները. վարչապետին խորհրդակցանք խոշտանգուեցաւ, իսկ երեսփոխան Ալի Իսողի ինքնաշարժը քարկոծուեցաւ»: «Պաշտօնական, երեսփոխանական եւ ժողովրդային շրջանակներ կը դատապարտեն երեսփոխան Իսողի եւ Ֆէտի Ֆաուապի դէմ յարձակումները. Հրպայի երեսփոխանական պլոքը դէպքերուն պատասխանատուն կը նկատէ շրջանի բնակիչները. արդեօք Ուկրաինի կամուրջի ծրագիրին կատարումը եւ Հրպայի ներքին հարցերու մէջ մխրձելը ի շահ որո՞ւ տեղի կ'ունենայ», գրած է «Լիուս» օրաթերթը:

«Մուսաբաբայ» նշած է. «Հրպայի Ուկրաինի մէջ պետութեան մարտահրաւերը կը կարգաւ. Հրպայի հետեւորդները ծեծի ենթարկեցին Ֆէտի Ֆաուապը եւ քարկոծեցին Ալի Իսողի. Հարիւրի շրջանակները կ'ըսեն, որ ամբողջ հարցը ճնշման միջոցով պետական գանձէն նոր գումարներ կորսնցնելու կը վերաբերի», իսկ «Պայրաբ»-ը գրած է, թէ «Ուկրաինի մէջ ստեղծուած ծանր կացութեան պատճառով կամուրջի շինութիւնը առկախուեցաւ. Հարիւրի եւ Նեպի Պրիի երկուսն առկախութեան ընթացքին քննեցին կամուրջը փոխարինող ծրագիրներ որդեգրելու կարելիութիւնը. Հրպայի եւ վարչապետ Հարիւրի պատերազմ կը մղեն հարցադրութիւններով եւ ծանր ամբաստանութիւններու փոխանակումով:

Պաղեստինեան հարցին առնչութեամբ իրանական օրաթերթերը գրած են, թէ Արաբաթ իր թելեառուութիւնը պիտի դնէ ընտրութիւններուն, իսկ Պուշ յայտարարած է, թէ պաղեստինցիներուն ոչ մէկ օժանդակութիւն պիտի տրամադրուի մինչեւ բարեկարգումներու իրագործումը:

«Նահար» օրաթերթը իր առաջին էջով տուած է նախկին նախագահ Էլիաս Հըրաուիի գիրքի ստորագրութեան եւ այդ առիթով կազմակերպուած երեկոյին լուրը: «Հանրապետութեան վերադարձը փոքր երկիրներէն պետութեան» խորագիրով գիրքին մէջ նախկին նախագահը ամփոփած է իր յուշագրութիւնները: «Մայրաքաղաք» լրագրողը մը անդրադարձած է Մեթնի երեսփոխանական ընտրութիւններու ընթացքին հայութեան պարզած պատկերին: Ան այս առնչութեամբ դիմած է կարգ մը կողմերու, որոնց կարգին՝ Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսէփեանի, այս մասին անոր կարծիքը եւ ընդհանրապէս Պաշտօնական կեցումները ճշդելու համար: Նախարարը նշած է, թէ այս անգամ

եւս հայերը փաստեցին, թէ իրենք մեծ դերակատարութիւն ունին ընտրութիւններուն մէջ: Ան նաեւ անդրադարձած է անսպասելի խախտումներուն:

Ներքին էջերով օրաթերթերը լուսարձակի տակ առած են Ուկրաինի իրադարձութիւններուն առնչուող պանայան կողմերու եւ անձնաւորութիւններու տեսակէտներն ու կեցումները:

«Լիբանանեան կեանք» էջերուն մէջ տակաւին առկայ է մայրաքաղաքի թանոց ինքնաշարժներու եւ փոքր փոխարկառքերու արգիւման հարցը: Վերջինին վարորդները հանդիպումներ ունեցած են համապատասխան կողմերու եւ պատասխանատուներու հետ եւ խնդրած, որ այս հարցին յարմար լուծում մը գտնեն, միշտ նկատի ունենալով եւ ի մտի ունենալով, թէ այս փոխարկութիւնը իրենց գործի ասպարէզն է ու եկամտի աղբիւրը, գրած են թերթերը:

Միւս կողմէ, տակաւին կը շարունակուի Մարոնիներու Միջպագային ժողովի մթնոլորտը եւ կատարուած յայտարարութիւններուն դէմ կեցումները:

Թերթերը նաեւ անդրադարձած են «թմրեցուցիչի գործածութեան դէմ պայքարի համաշխարհային օրուան առիթով» Լիբանանի մէջ կայացած աշխատանքներուն: Ըստ անոնց, շրջաններու պատասխանատուներ եւ երեւելի անձնաւորութիւններ փողոց իջնելով մասնակցած են թմրեցուցիչի գործածութեան դէմ տարուող պայքարին եւ թղթիկներ բաժնած են անցորդներուն:

Կրթական ծիրին մէջ համաձայնագիր մը ստորագրուած է Լիբանանի կրթութեան նախարարութեան եւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպանատան միջեւ, ուսուցիչներ փոխանակելու եւ փորձառական շրջաններ կայացնելու առնչութեամբ: Պայքարի պիւնտիստներուն երկրորդ օրուան ակնարկելով, մամուլը գրած է, թէ բողոքի այլքը հանդարտած է:

ԿԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ ՌՈՆԵՑԱԻ ԴԵՄՊԱՆԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 26 Յունիս 2002ին, Արամ Ա. կաթողիկոս Պիբֆայայի վանքին մէջ ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան իրազոր դեսպան Արեգ Յովհաննիսեանի: Հանդիպման ընթացքին արծարծուեցան Հայաստան - Սփիւռք Բ. խորհրդատուութիւնը եւ ընդհանրապէս Հայաստան - Սփիւռք գործակցութեան առնչուող հարցեր: Ապա դեսպանը ճաշի հիւրը եղաւ վեհաժողովի Հայրապետին:

«ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ» ԿԵՐՊՈՐԱԿՆԵՍԻ ԱԿՏԵՍԻԱ

ԱՒԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Երէկ, երեկոյեան ժամը 18:00ին, կազմակերպութեամբ Համազգայինի «Թորոս Ռոսլին» կերպարուեստի սկադեմիային, Համազգայինի «Նշան Փայլանձեան» ձեւմարանի «Վասպուրական» սրահին մէջ տեղի ունեցան վկայականներու տուցութիւն եւ արտատական գործերու ցուցահանդէս՝ ակադեմիայի ուսանողներ Լէյլա Համաուի - Արալայի եւ Քրիսթին Պայրամեանի:



Ներկայ էին Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մաքրիեան, Համազգայինի Կեդրոնական վարչութեան եւ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան անդամներ, ինչպէս նաեւ մեծ թիւով արւեստասէներ: Համազգայինի «Թորոս Ռոսլին» կերպարուեստի սկադեմիայի վարչութեան ատենապետուհի Շաքէ Փարմաբաբեան արտասանեց հանդիսութեան բացման խօսքը: Ան խօսեցաւ կերպարուեստի վարձագման մարզին մէջ «Թորոս Ռոսլին» կերպարուեստի սկադեմիային ունեցած մեծ դերակատարութեան մասին: Այս ծիրին մէջ ան նշեց ակադեմիայի արւեստասէներ փոխարկութիւնը Համազգայինի Նշան Փայլանձեան ձեւմարան, ուր ակադեմիայի դասընթացքներուն հետեւողներուն պատրաստութեան առիթով մեծ առիթ պիտի ընձեռնուի: Շաքէ Փարմաբաբեան իր խօսքին մէջ ողջունեց օրուան դուստրական անձնակազմը: Իր խօսքին վերջաւորութեան Շաքէ Փարմաբաբեան շնորհակալեց Լէյլա Համաուի - Արալայի եւ Քրիսթին Պայրամեանը անոնց մաղթելով մնայուն ստեղծագործական եռանդ:

Բացման խօսքին ետք արաբերէնով խօսք առաւ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան «Թորոս Ռոսլին» ակադեմիայի ներկայացուցիչ Կարո Թաւրեան, որ ներկայներուն բարի գալուստ մաղթելէ ետք անդրադարձաւ Համազգայինի կրթական եւ մշակութային միութեան պատմութեան եւ անոր ունեցած դերակատարութեան կրթութեան, մշակույթի եւ արուեստներու պարզագոյն մարզերուն մէջ: Վերջին խօսք առնողը եղաւ դատական անձնակազմի նախագահ Ռոպէրտ Սիւտեան, որ ֆրանսերէնով անդրադարձաւ Լէյլա Համաուի - Արալայի եւ Քրիսթին Պայրամեանի ստեղծագործութիւններուն եւ ներկայներուն փոխանցեց դատական անձնակազմին գնահատանքը անոնց նկատմամբ: Այնուհետեւ Շաքէ Փարմաբաբեանի, Կարո Թաւրեանի եւ Ռոպէրտ Սիւտեանի ներկայութեամբ տեղի ունեցաւ վկայականաց տուցութիւն: Սրահին մէջ արդէն իսկ ցուցադրուած էին երկու արուեստագիտուհիներուն գեղանկարչական եւ քանդակագործական գործերը:

ՎԱՍԱԶԳԱՅԻՆԻ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԶՈՒԷԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՇՈՒԵՏՈՒ ՎԱՄԵՐԳ

Որբան ալ խօսուի երաժշտութեան եւ արուեստի մասին եւ մարդիկ զգան անոնց հոյակապ ու աննիւթական արժէքը, տարբեր ազդեցութիւն եւ ուժգնութիւն ունի այդ արուեստն ու երաժշտութիւնը լսելը, ապրիլը եւ զանոնք ամբողջ հունիսեամբ զգալը:



Երէկ, Հինգշաբթի 27 Յունիսի երեկոյեան ժամը 7:00ին, Սէն Ժոզէֆ համալսարանի Փիէռ Ապու Նաթըր սրահը այդպիսի աննիւթաց երաժշտական վայելք ընծայող համերգի մը ժամագրավայրն էր, ուր Համազգայինի Բարսեղ Կանաչեան երաժշտական ֆոլէճի տարբեր տարիքի 37 աշակերտներ հանդէս եկան նուագով ու երգով:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց ֆոլէճի տնօրէնը՝ Երուանդ Երկանեան, որ ըսաւ, թէ այս համերգը հաշուեցու է, որովհետեւ աշակերտները, ինչպէս նաեւ տարուան ընթացքին անոնց ուսուցչները այս հանդիսութեան ընթացքին իրենց իրագործումներով հանդէս կու գան թէ՛ հանրութեան եւ թէ՛ իրենք իրենց առջեւ: Ան ըսաւ, թէ ֆոլէճի ծրագրի մէջ կատարուած փոփոխութիւնները կը միտին աւելի եւս բարձրացնել երաժշտանոցի մակարդակը, աւելցնելով, որ

զպրոցը արդէն իր նպատակը իրագործած է որոշ տակաւին, որովհետեւ աշակերտները յաջողութիւններ արձանագրած են ոչ միայն հայկական, այլ նաեւ համալրանան-Քոլէճի տարբեր տարիքի 37 աշակերտներ հանդէս եկան նուագով ու երգով: Ապա երաժշտանոցի ամենէն փոքր տարիքով աշակերտներէն մինչեւ երիտասարդները զաշակելի, սրիւնգի, կիթառի եւ թաւջութի մեկնաբանութեամբ, ինչպէս նաեւ երգերով ներկայացուցին ճոխ, հաճելի ու գնահատելի յայտագիր թաշտեան, որ շատ լաւ մը:

Հ. Բ. Ը. Մ. ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ԳՎՐՈՒՀԻ-ՅՈՎԱԿԻՄԵԱՆ (ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ) ՊՕՂՈՍ Գ. ԿԱՐՄԻՐԵԱՆ (ՄԻՋՆԱԿԱՐԳ) ԼԵՒՈՆ Կ. ՆԱԶԱՐԵԱՆ (ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ) 2002-2003 ԿՐԹԱՇՐՁԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի սեփական վարժարաններու 2002-2003 տարեշրջանի արձանագրութիւնները նախկին եւ նոր աշակերտներուն համար տեղի պիտի ունենան 5 Յունիսէն 5 Յուլիս 2002: Լեւոն Կ. Նապարեան եւ Դարուհի-Յովակիմեան վարժարաններու աշակերտները պիտի արձանագրուին «Չապէլ Մովսէսեան» կեդրոն, Ա. յարկ (Սին Էլ Ֆիլ), Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8:30էն կէսօրէ ետք ժամը 3:00: Հեռաձայն՝ 01-481319 եւ 01-484196: Պօղոս Գ. Կարմիրեանի աշակերտներուն արձանագրութիւնները տեղի պիտի ունենան Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերը, 04-413933 եւ 04-522841:

Կրթական յանձնախումբը կրթական ստի դիւրութիւններ պիտի ընծայէ ուսումնական գետնի վրայ յաջողակ ասններու եւ տնտեսական ու նիւթական դժուարութիւն ունեցող ընտանիքներու պատկերներուն: Կրթական ստի դիմումները կարելի է ստանալ արձանագրութեան ժամանակ:

Հ. Բ. Ը. Մ. Ի. ԼԻՔԱՆԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի ժՏԵՅՏԵԻ ՄԱՍՆԱԺԻԳ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Երէկ կ'ունենայ Ուրբաթ, 28 Յունիս 2002, երեկոյեան ժամը 8:00ին, ԼՕՍԻ «Անահիտ» ակումբին մէջ, Մար Եուսէֆ: Ծանօթ.- Ներկայներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի ժամը 8:30ին: ԿԱՐՁՈՒԹԻՒՆ

28 ՅՈՒՆԻՍ - 4 ՅՈՒԼԻՍ 2002

ԳՐԿԻՐ

- Եջ 3.- Ալիեի ուրուականը Հայաստանում
- Եջ 5.- Լոյսի մարդուց միջնէ յանձնաժողով
- Եջ 7.- Վերանայել «Սողոմոնեան» որոշումները
- Եջ 8.- Աղբատութիւնն է՝ ազատութեան փնջը
- Եջ 9.- Դատարանները՝ աստիճաններին յանդիման
- Եջ 10.- Անցում ուսուցման վեցօրեայ շաբաթի

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԺԻԳ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 28 Յունիս 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Աղբալեան» ակումբի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ: Ծանօթ.- Ներկայներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի երեկոյեան ժամը 9:00ին: ԿԱՐՁՈՒԹԻՒՆ

IGOL MOTOR OIL FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՄԵՐ ԵՐԹԸ ՔԱՅԼ ՄԸ ԵՒՍ ՄՕՏԵՑԱԻ ԻՐ ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻՆ

(ՔԱՆԱՏԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ԿՈՂՄԵ ՀԱՅՎԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

Հինգշաբթի, 10 Յունիսը կարեւոր թուական մը հանդիսացաւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու հետապնդման ճամբուն վրայ, երբ Քանաւայի Մերակոյտը Հայկական Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ մը որդեգրեց՝ միաժամանակ կոչ ուղղելով կառավարութեան, որպէսզի ան եւս նոյն քայլին դիմէ:

Ճիշդ է, Քանաւայի Մերակոյտը գործնականօրէն օրէնսդիր մարմին չէ, չունի օրէնսդրական այն կշիռը, ինչ որ ունի Մ. Նահանգներու Մերակոյտը: Ան պարզապէս բարոյական հեղինակութիւն մըն է: Սակայն բանաձեւին որդեգրումը, որ խորքին մէջ շրջանի Հայ Դատի Յանձնախումբին տարիներու հետեւողական ճիգերուն արդիւնքն է, նոր մղում եւ թափ պիտի տայ երկրի խորհրդարանին մէջ նմանօրինակ բանաձեւ մը յաջողցնելու մեր աշխատանքներուն:

Այս իմաստով, պատենչ մը, պատուար մը եւս կարելի եղաւ ճեղքել Քանաւայի մէջ, եւ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման մեր ճիգերուն մէջ կարեւոր հանգրուան մը նուաճեցինք: Մերակոյտին կողմէ հայ ճանաչումը, ճիշդ է, օրէնքի համազօր չէ: Կրնայ չենթադրել թուրքիոյ նկատմամբ քանաւայական քաղաքական վարքագիծի փոփոխութիւն: Բայց եւ այնպէս, Քանաւայի քաղաքական շրջանակներէն ներս, յատկապէս դաշնակցային մակարդակի վրայ, կը ստեղծէ հայնպատան նախընթաց մը, որուն վրայ պիտի հիմնուին մեր հետագայ քաղաքական աշխատանքները:

Մերակոյտականներ Եւրոյի Մահէօ եւ հայագի Ռէյմոնտ Սեթլաքունէ իրենք եղան բանաձեւը Մերակոյտի սեղանին դնողները՝ ընթացակարգային-ժողովարարական մարզէ ներս անոր նախագահին օժանդակութեամբ: Հետեւաբար կ'ողջունենք ծերակուտականներուն օրէնսդրական նախաձեռնութիւնը՝ իրենց արդարամիտ եւ ճշմարտութեան հետամուտ լուրջ կամար:

Ճիշդ է որ հանգրուան մը նուաճուեցաւ Քանաւայի մէջ, սակայն կը մնայ նոյնքան եւ աւելի կարեւոր հանգրուան մը: Այդ ալ Հայկական Յեղասպանութեան ճանաչումն է տեղուոյն կառավարութեան եւ խորհրդարանին կողմէ:

Քանաւայի Մերակոյտին առած այս քայլը այլ առումով մը եւս նշանակալից է մեզի համար:

Ինչպէս սակէ առաջ հաստատած էինք, «Հայ-Թրքական Հարցի մասին Յանձնաժողովի» երեւան գալը պատճառ դարձած էր, որ արեւմտեան քաղաքական շրջանակներ ետ կանգնին Հայկական Յեղասպանութեան ճանաչման իրենց դրական տրամադրութիւններէն, այն պատճառաբանութեամբ (կամ պատրուակով), որ արդէն իսկ «երկխոսութեան», «հարցի մասին» յանձնաժողով մը կայ, զոր պէտք է «ողջունել», որպէսզի Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները մտնեն ապագայի հեռանկարներու որոնման հանգրուանը՝ պատմական հարցերը ձգելով միայն պատմաբաններու վճճահատումին... Այս յանկերգին ունկնդիր եղանք ոչ միայն Ամերիկայի Քոնկրէսի շրջանակներէն ներս, այլեւ՝ Եւրոպական Խորհրդարանի պաշտօնական բանաձեւումներու ընդմէջէն, ինչպէս Ալէք Լամասուրի տիրահաշակ նախագիծը: Եղան նաեւ անհատ քաղաքական դէմքեր, ինչպէս՝ Էտուարտ Շեւրտսածէ, որոնք ողջունեցին հայ-թուրք «հարցի մասին» ճիգերը:

Այս ընդհանուր մթնոլորտին մէջ Քանաւայի Մերակոյտին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը, անկախ ներքին՝ քանաւայական առումով իր ունեցած նշանակութիւնէն, մեզի համար կարեւոր է նաեւ անոր համար, որ ջրեց «հարցի մասին» յանձնաժողովի ճարտարապետներուն տեսակէտները, քանզի անոնց լարած ակնները, որոնք գետեղուած էին հայ-թուրք կնճիռի արդարացի լուծման ճամբուն վրայ:

Քանաւայական այս որոշումը անխուսափելիօրէն իր դրական ազդեցութիւնը պիտի ունենայ նաեւ Մ. Նահանգներու օրէնսդրական շրջանակներէն ներս ամերիկահայութեան հետապնդելիք աշխատանքներուն վրայ, առնուազն հայնպատան տրամադրութիւնները վերաբործեցու եւ «հարցի մասին» յանձնաժողովով ստեղծուած խաւաքարտէ չէնքին փլուզումը իր բեւ ազդակ հաշուի առնելու իմաստով:

Ահաւասիկ, իրերու այս ընդհանուր դրութեան մէջ է, որ Քանաւայի Մերակոյտին կեցուածքը, առանց չափազանցելու կամ ստորագնահատելու անոր տարողութիւնը, մեզ քայլ մը եւս կը մօտեցնէ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման:

Մեր ճիգերը պիտի արդիւնաբերուին Քանաւայի Մ. Նահանգներ, որպէսզի օղակը քիչ մը եւս սեղմուի Հայկական Յեղասպանութեան պատասխանատու թուրքիոյ շուրջ, մինչեւ որ ամբաստանելու արդար հատուցում կատարէ հայութեան:

ԽՄԲՎԳՐԱԿԱՆ «ԱՄՊԱՐԵՉ»Ի

ՀԱՄԲԻԿ ԱՍՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍԵՆ ՀԱՄՔԻԿ ԱՍՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍԵՆ HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 USA

ՄԱՆՈՒԱՆ ԳՕԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅ ԴԱՏԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԸ՝ ՓԻԵՌ ՔԻՅԱՌ



Ընթացիկ տարուան 27 Յունուարին լրացաւ մահուան իննսուներեակը Ֆրանսացի բանաստեղծ, հրապարակագիր եւ հայ ժողովուրդին եւ անոր արդար Դատին հեղինակուող պաշտպան՝ Փիեռ Քիյառի, որ համարուած էր իր ժամանակի բուն պատմաբան թեան տարիներուն իր գրիչով, խօսքով ու գործով անգնահատելի աշխատանք տարած է յօգուտ մեր ժողովուրդին:

Փիեռ Քիյառի անժամանակ մահը խորապէս յուզած է հայ ժողովուրդն ու Հ. Յ. Դաշնակցութիւնը: Անդարձ, մանաւանդ որ այդ տարիներուն Հայ Դատի հետապնդման մեծաթիւ գործեր եղած են: Աւելի ցաւալին այն էր, որ երկու տարի ետք հրաժարուելու տարին թանկագին երկու դէմքեր եւս՝ Ֆրանսիս տը Փրեսանսէ եւ Ժան Ժորժ:

Փիեռ Քիյառ անծանօթ մը չէր հայ հասարակութեան: 1892 - 1896, չորս տարի ան ապրած էր Կ. Պոլիս եւ իբրեւ ուսուցիչ կայսթայի կեդրոնական վարժարանին եւ Բերայի Կաթողիկէ Հայոց ուսումնարանին մէջ պաշտօնավարելով՝ աւիթը ունեցած էր ճանաչանալու մեր ժողովուրդն ու անոր փրկութեան նուիրուած հայ գործիչները: Մօտէն ձուռթ էր թուրքերու կեանքին, սիրած էր հայ ժողովուրդը իր բոլոր առաւելութիւններով՝ թերութիւններով եւ Հայ Դատի հետապնդող յիշք է տոյճնք՝ գործե-

ման ջատագովներէն մէկը եղած էր: «Փիեռ Քիյառ ամէն բանէ առաջ մարդ մըն էր: Քաղաքացին էր: Ան ամէնէն խանդավառ պաշտպանն եղաւ Հայկական Դատին, որովհետեւ համոզուած էր, թէ արդարութեան դատ մըն էր ան, դատը՝ մարդկութեան ու քաղաքակրթութեան: Ու միշտ ալ բարեկամն եղաւ նման բոլոր դատերու:

«Անկախաբար գրիչի գործունէութենէն, ան նուիրուած էր նաեւ տենչագին աշխատանքի մը՝ տարբեր արտայայտութիւններով: Ինք ալ, ինչպէս մեր թանկագին Քիյառափոր Միքայէլեանը, կը կազմէր տեսակ մը շողախ՝ տրամադրելի իր բոլոր ուժերով», կը գրէր Շաւարշ Միսաքեան:

Քիյառ ծնած էր Փարիզ, 14 Յուլիս 1864ին: Իր ուսման սկիզբը եղած էր Ֆրանսիայի Լիկեոնին մէջ, յաճախած էր Շարթի վարժարանը եւ շրջանաւարտ էր Դպրոցութեանց համալսարանէն: 1896ին կը հիմնէ «Լա Փլեյստ» թերթը իրապաշտ ուղղութեամբ: Փիեռ Քիյառ հրապարակ կու գայ «Լա ֆիլ» օ մէն քուփե» վերնագիրով ինքնատիպ բանահիւսութեամբ: Ընդունակ բանաստեղծ օրէ օր աւելի պատկառելի եւ առաջնորդի դեր մը ստացած իր գործած միջավայրին մէջ, հետզհետէ կը հրապարակէ իր Բանի Փառքը՝ «Լա կլուար տի - վերպ», «Լա լիբ հե- շար»-ը է տոյճնք՝ գործե-

ՀԱՍՏՈՒՄԵԱՆ ՇԱՐՈ՛Ւ ԷՅ 8

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԻՆ ՄԱՍԻՆ

«Մի անողոր մահ եւ մի ծանր կորուստ...»

«Ընդամենը 48 տարեկան հասակում, իր հարուստ ծիրանի գարգացման գագաթին, գերեզման է իջնում այն մարդը, որ բոլոր հայասեր եւրոպացիների մէջ ամենահարգատե էր մեզ համար՝ մի մտերիմ, մի ընկեր, աւելի քան ընկեր-բարեկամ... Այդ բանի իսկական նշանակութեամբ, այդ գաղափարի ամենավեցի իմաստով: 17 տարուց ի վեր ցաւ անդադար չեփորում էր աշխարհի առջեւ հայ ժողովրդի նուիրակը եւ ողբերգական դատը, նրա արիւնոտ ճգնաժամն ու օրհասը: «12 տարուց ի վեր ցաւ մեզ հետ էր, Դաշնակցութեան հետ, բաժանում էր մեր յաջողութիւնների բերկրանքը եւ ձախորդութիւնների վիշտն ու դառնութիւնը... Մեր շարքերից է, որ պոկուում է մի խոշոր դեմք, հայոց մոռյալ երկուկամարից է, որ անհետանում է մի պայծառ աստղ: «Քիյառի մահը սուգ է հայ ժողովրդի, հայ երիտասարդութեան համար: Ասում է, որ ամէն մարդ երկու հայրենիք ունի - իր սեփական եւ ապա Ֆրանսան: Ֆրանսացի Քիյառը երկու սիրուած հայրենիք ունէր - իր սեփականը եւ Հայաստանը»:

«ԳՐՕՇԱԿ» 12 Յունուար 1912

«1900ին էր, 12 տարի առաջ, որ հայ ցաւի երգիչը, միջազգային Ամպիոնի վրայ կանգնած, հռչակեց իր հօգ՝ սպասարկութիւնը տանջուող ժողովրդին: Ու այն ժամապողովորդները, այս խօսքերով ողջունեցինք նրա վեհ գործը: «Մոխրակոյտի վրայ բազմած,»

ՊՈԼՍՈՅ ՄԵՋ, ԱՅՍ ԶԱԲԱԹԱԿԵՐՁԻՆ

ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԵՄԻՆԱՐ

Հելսինքիի Քաղաքացիական Միութեան կազմակերպութեամբ, այս շաբաթվաբերին Պոլսոյ «Տիւրք» պանդոկին մէջ տեղի պիտի ունենայ «Թուրքիա-Հայաստան երկխօսութեան համար քաղաքացիական նախաձեռնութիւն» խորագրով սեմինար մը, որուն պիտի մասնակցին Հայաստանէն եւ թուրքիայէն մտաւորականները:

Համացանցի «Հայթերթ» պարբերաթերթին համաձայն, Հայաստանէն 10 մտաւորականներ ներկայ պիտի գտնուին այս սեմինարին: Կը նախատեսուի, որ բացման խօսքով ելոյթներ ունենան Հելսինքիի Քաղաքացիական Միութեան թուրք եւ հայ նախագահները՝ Մուրատ Պելքէ եւ Աւահիտ Պայանտուր: Բնարկումներուն հիմնական նիւթերը պիտի ըլլան հայ-թրքական յարաբերութիւններուն ներկայ վիճակը, այդ յարաբերութիւններուն բարելաւման մէջ մտաւորականներու ներդրումը, յարաբերութիւններու լուսաբանման եւ վերլուծման մէջ լրատուամիջոցներու դերը, երկու երկիրներուն գործակցութիւնը եւ այդ ուղղութեամբ առնուելիք քայլերը: Բնարկումներու կազմակերպիչներուն շարքին է Հելսինքիի Քաղաքացիական Միութեան անդամ եւ «Ակոս» պարբերաթերթի խմբագիր Հրանդ Տիքը: «Հայթերթ»-ին համաձայն, կարգ մը քննարկումներ տեղի պիտի ունենան դուստրալ եւ անոնց պիտի մասնակցին միայն հրաւիրեալներ:

ԹՈՒՐԿԻԱ՝ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑԸ

ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՕՆԱՍԱՐ ԱՐԸ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար մը, իր անուր չբացայայտելու պայմանով, անցեալ շաբաթ յայտարարած է, թէ կողման է մէջ Միացեալ Նահանգներու ռազմավարական հաւատարիմ դաշնակիցը թուրքիան է, եւ հայ-թրքական յարաբերութիւններու հաստատման սիրոյն Ուաշինկթըն չի վտանգեր թուրք - ամերիկեան բարեկամութիւնը: «Աշխարհի մէջ կան պետութիւններ, որոնք իրարու հետ վատ յարաբերութիւններ ունին, ինչպէս՝ Հայաստանը եւ թուրքիան: Միացեալ Նահանգներ պատրաստ են միջնորդի դեր ստանձնել հայ-թրքական յարաբերութիւններուն մէջ, եթէ երեւանը եւ Անգարան նման ցնակութիւն յայտնեն», ըսած է ամերիկացի պաշտօնատար՝ աւելցնելով, որ Ուաշինկթըն կը փափաքի, որ երեւան եւ Անգարա ունենան լաւ յարաբերութիւններ, ինչ որ կարեւոր է կողմակալ կայունութեան եւ տնտեսական զարգացման համար:

«Մենք չենք կրնար թուրքիոյ ստիպել՝ բանալ հայ-թրքական սահմանը, յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ: Մենք միայն կրնանք քաջալերել: Այս ուղղութեամբ երեւանը լաւ գործ կը կատարէ: Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ եւ նախագահական աշխատակազմին մէջ կան դիւանագէտներ, որոնք շատ լաւ կը հասկնան հարկան կարեւորութիւնը», ըսած է պաշտօնատարը, նման դիւանագէտները «հարեանաէր հայեր» նկատելով: Ըստ անոր, թուրքիա պատրաստ է «պզտիկ քայլերով» առաջ շարժելու, եւ թէ Հայաստանը պատրաստ է պատասխանելու այդ քայլերուն:

«Հայերու եւ թուրքերու միջեւ հարիւր տարուան պատմութիւն ունեցող հարցերը մէկ գիշերուան մէջ կարելի չէ լուծել», նշած է ամերիկացի պաշտօնատարը:

Հայ-թրքական սահմանին վրայ ուսուցանող ուժերու տեղաբաշխման եւ ազդեցութեան մասին հարցումի մէջ պատասխանելով՝ Ամերիկայի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարը ըսած է. «Մենք չենք կարծեր, որ ուսուցանող ռազմական ներկայութիւնը խոչընդոտ է: Հայաստանը անկախ, ինքնիշխան պետութիւն է, եւ եթէ կը կարծէ, որ ուսուցանող ռազմականութեան կարիքը ունի, ատկա իր խնդիրն է: Ներկայիս Միացեալ Նահանգներ որեւէ ձեւով դէմ չեն կողմակալ մէջ Ռուսիոյ ներկայութեան»:

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐԽԻՆԵՐԸ ՀԱՄԱՅԱՆՅՈՎ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Հայրենի լրատու գործակալութիւններու համաձայն, արդէն իսկ աշխատանքները սկսած են Օսմանեան կայսրութեան վեց հարիւր տարուան արխիւները համազանցի վրայ գետեղելու:

Արխիւները կ'ընդգրկեն գիտնութեան, տնտեսական եւ քաղաքական աւելի քան 150 միլիոն փաստաթուղթեր ու տեղեկագրիչներ, որոնց հնագոյնը կու գայ 1300 թուականէն:


Թէեւ տարեկան աւելի քան հազար ուսումնասիրողներ արտօնութիւն կը խնդրեն օսմանեան արխիւները քննելու, սակայն տակաւին այդ արխիւները կը մնան խղճալի վիճակի մէջ:

ԳՐԻՂՈՐ ԶՈՂՐԱՊ

Ինդուստրիալիզացիայի և Արհեստագործության

ԳԻՐՔԻՆ ՆԱՄԱԶԱՅՆ

ԻՍԼԱՄ ԶԱՓԱԿՈՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՄՐՅԻՆ ԴԱՍԻԱՐԱԿԵԼՈՒ ԸՆՍԱՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ: «ՆԻՈՒՉՈՒԻՔ» ԿԸ ԳՐԷ.



Քարաչիի (Փաքիստան) ժամա Բուլոմի Իսլամի դպրոցում մեջ կը պատրաստուին բազմաթիվ թալեպան ղեկավարներ: Պատկերասփիւնը ու մարգախաղերը արգիլուած են հոն: Աշակերտներ իրենց ժամանակին մեծ մասը կ'անցնեն կրօնական գիտութիւններ սովորելով, իսկ ժիւառը պարտադիր է: Բազմաթիվ աշակերտներ սրբազան պատերազմի իրենց մասնակցութիւնը բերած են Աֆղանիստանի եւ Բաշարի մէջ:

Սահմանած կրթական ծրագիրը: Որեւէ տեսակի կրօնական գիրքեր արգիլուած են դպրոցական գրադարաններում մէջ: 12 տարեկանէն վար աղջիկներուն արգիլուած է լաչակ դնել: Ընդդիմադիրները կ'ըսեն, թէ Պահա՛ Նա՛ Տիւն վերջին 5 տարիներուն ուսուցչական ասպարէզէն վտարած է 2000 կասկածելի իսլամականներ:

Կարգ մը չափաւորականներ ունին աւելի մեծ տնտեսի: Թաթ Հարկայ ձեռնարկած է Ամերիկայի մէջ իսլամական առաջին համալսարանը հիմնելու ծրագիրը մը՝ «Իբրեւ փոխընդունարան» Այլի Լիկի», ինչպէս կը ընտրուէր զայն: Ան կ'ենթադրէ, որ 100 միլիոն տոլարի պէտք ունի Քրիստոնէի համալսարանը հիմնելու համար: Յարգ ան գոյացուցած է այս գումարին նուազ քան մէկ առ հարիւրը: Աստուհանդերձ ան կազմած է ստորջններու յանձնախումբ մը եւ մօտ օրէն պիտի կնքէ Նիւ Եորքէն դուրս համալսարան մը կառուցելու պայմանագրութիւնը մը: Ան կ'ըսէ, թէ ուսման այս կեդրոնը իր տեսակին մէջ առաջինը պիտի ըլլայ աշխարհի տարածքին եւ բոլորովին տարբեր՝ Փաքիստանի եւ Մալթայի նման երկիրներու իսլամական համալսարաններէն: Հարկայ կը մէջբերէ Հատիթին տող մը. «Գիտականին մէջանը աւելին է, քան՝ նահատակին արիւնը»:

(ՅԱՊԱՆՈՒԱՄ)

նան Անտոնովնայ Արարիոյ, Լիպիոյ եւ Թուրքիոյ մէջ գործող ծայրախղական խմբաբազմերէն:

Իսլամական կրթական համակարգը կը տարբերի տեղէ տեղ: Բրիտանիոյ, Միացեալ Նահանգներու եւ այլ վարչերու մէջ իսլամ ուսուցիչներ կը փորձեն բաշխել աշակերտներուն անհատական մտածողութիւնը եւ այլ մշակոյթներու ծանօթութիւնը:

Նեղոստեղծութիւնը իսլամական իտէլա մը չէ: «Գիտութիւն ցանկացէ՞ք օրօրոցէն մինչեւ գերեզման», կը թելադրէ Մուհամմատ: Առաջին իսլամները մեծ խանդավառութեամբ հետեւած են այս խորհուրդին: «Իսլամական աւանդական կրթական ծրագիրին մաս կը կազմէին կրօնական դաստիարակութիւնն ու բոլոր տեսակի գիտութիւնները, ինչպէս՝ տրամաբանութիւն, աստղագիտութիւն եւ ուսողութիւն, կ'ըսէ Ճիորճիայի համալսարանին մէջ իսլամական գիտութիւններու դասախօս Ալլան Կոտլայս:- Աշխարհը կը համարուէր Աստուծոյ նշաններուն ամբողջութիւնը: Իսլամները պարտաւոր էին ճանչնալ աշխարհը՝ Աստուծոյ նշանները ճանչնալու համար: Իրօք, իսլամ ուսումնասիրողներ կ'անուխ միջնադարուն պահպանած եւ ծաւալած են յունական դասական մտածողութիւնը, մինչ Եւրոպայ տակաւին կը տապալուէր անգրաճանաչութեան եւ վարագրութեան մէջ: «Եթէ իսլամ եւ արաբ գիտնականներն ու մտաւորականները չըլլային, եւրոպական վերածնունդը տեղի պիտի չունենար», կ'ըսէ Նիւ Եորքի Սարահ Լորեն Քայլէնին մէջ ափրիկեան պատմութեան դասախօս՝ Թաթ Հարկայ:

Իսլամական գիտութիւնն ու կրթութիւնը դարձուած են փոփոխութիւններ կրած են: «13րդ դարու մոնկոլական արշաւանքներուն յաջորդեց լճացում մը», կ'ըսէ իսլամական նիւթերու ուսումնասիրող գրագէտ Թահաբ Կարիբ: Դպրոցներ սկսան կեդրոնանալ Քուրան արտասանելու վրայ, քան թէ՛ անոր պատգամը մեկնաբանելու: Ասիական աւելի շեշտուեցաւ, երբ իսլամութիւնը տարածուեցաւ արաբական երկիրներէն անդին: Բազմաթիւ իսլամներ կը հաւատան, որ Աստուած անձամբ թելադրած է Քուրանը, հետեւաբար կարելի չէ հաւատք ընծայել անոր թարգմանութեան:

Այժմ կարգ մը իսլամ կրթական պատասխանատուներ հարցական տակ կ'առնեն Քուրանը գոց սորվելու պարտաւորութիւնը: «Իսլամական երկիրներուն մէջ տակաւին կը պատրաստուին կրօնաւորներ, որոնք Քուրան կ'արտասանեն, սակայն անոնք չեն կրնար

Քուրանին մասին մտածել կամ զայն մեկնաբանել բրիտանական ժամանակակից կենսաբան գիտնականներէն, կ'ըսէ Պլերմինկհամի համալսարանին մէջ իսլամական կրթութիւնը ուսումնասիրող մասնագէտ Ապտուլլա Սահին: Եթէ ճիշդ ձեւով կարգաւոր Քուրանը, անիկա հաճելի կը թուի մեր մտքին: Քուրանը տեւաբար հարց կու տայ՝ «կը հասկնա՞ս, կը տեսնե՞ս» եւ հաւատացեալին կը մղէ իր տրամաբանութիւնը գործածելու:

Փաքիստան ձեռնարկած է վերակենդանացրելու գիտութեան նկատմամբ իսլամութեան երբեմնի սէրը: Պետութիւնը շատ աղքատ է ճրի կրթութիւն ընձեռելու համար: Ասիկա կը նշանակէ, թէ աւելի քան 800 հազար փաքիստանցի աշակերտներ պէտք է իսլամական կրօնական դպրոցներ յաճախեն կամ անուս մնան: Իսկ կրօնական դպրոցներուն (մատրաս) մեծածախնութիւնը չի դասաւանդեր ուսողութիւն կամ գիտութիւն: Ոմանք նոյնիսկ չեն սորվեցներ հիմնական գրաճանաչութիւն: Թալեպաններու հետեւողները կու գան նման վայրերէ: Սակայն Փաքիստանի համար կենսական են բոլոր դպրոցները: «Կրօնական դպրոցներուն մեծ մասը ուսում կը ջամբէ, օրական 3 անգամ ճաշ կու տայ եւ քննադատ տեղ կ'ընձեռէ աշակերտներու, որոնք այլապէս պիտի չկարենային պարզ յաճախել», կ'ըսէ նախագահ Մուշարաֆ: Այլ խօսքով, կարելի չէ փակել զանոնք: Փոխարէնը՝ Փաքիստանի նախագահը կը ծրագրէ բարելաւել մատրասները: «Նման դպրոցներու պատասխանատուներուն ըսած ենք, որ եթէ կրօնի կողքին արդի գիտութիւն եւ ուսողութիւն սորվեցնեն, այդ պարագային պետութիւնը պիտի ճանչնայ իրենց վկայականները եւ իրենց աշակերտները պիտի կարենան լաւ գործեր գտնել», կ'ըսէ Փաքիստանի ներքին գործը նախարարը: «Իրօք, Փաքիստանի հետեւող եւ ամէնէն աղքատ շրջաններու ժողովուրդը կ'ուզէ, որ մանուկներ սորվին ուսողութիւն, համակարգչային գիտութիւն, օտար լեզուներ եւ պատմութիւն, կ'ըսէ Փաքիստանի մէջ Ինթերնէշնըլ Ինստիտուտի Կուրի տնօրէնը: Անոնք կ'ուզեն, որ իրենց գաւակները կարենան լաւ գործ գտնել»:

Արմատական իսլամութեան վտանգը Եգիպտոսը կը մղէ աւելի խիստ կեցունք որդեգրելու: Եգիպտոսի կրթութեան նախարար Հիւսէյն Դիւմէլ Պահա՛ Նա՛ Տիւն տասնամեակէ մը ի վեր ճնշում կը բանեցնէ իսլամական կրօնական դպրոցներուն վրայ: Պետական թէ սեփական վարժարաններ կը կիրարկեն պետութեան

Աւելի քան 20 զինուորներ կը հսկեն Պոլսոյ համալսարանին գլխաւոր մուտքին: Անոնց պարտականութիւնն է կանգնեցնել ուսումնականներ, որ կը համարձակի լաչակ դնել կամ գլուխը ծածկել: Օրինագանցները կ'արտաքսուին համալսարանէն: 1923ին Թուրքիոյ հանրապետութեան ծնունդէն ի վեր երկրին ղեկավարները կը փորձեն ճզմել արմատական իսլամութիւնը: Թրքական արդի գրականութեան դասախօս մը կը խոստովանի, թէ երեւոյթը կ'ապացուցէ պետութեան վախը:

Իրօք, պայթարը կ'ընդգրկէ ամբողջ իսլամական աշխարհը: Իսլամները բաժնուած են երկու խումբի: Ոմանք կը հաւատան աշխարհիկ կարգերու, ուրիշներ իսլամական օրէնքին՝ շարիաթին: Անոնց մրցակցութեան դաշտը դպրոցներն են: Թուրքիոյ, Եգիպտոսի եւ Թունիսի նման աշխարհիկ պետութիւններ խիստ օրէնքներ կը պարտադրեն դպրոցները իրենց հակաշիւթին տակ պահելու համար, մինչ իսլամական օրէնքին կառուած ուսուցիչներ եւ աշակերտներ կը գործեն գաղտնի: Փաքիստանի պետութիւնը «աւելի մեծ ժիւառ մը» յայտարարած է գիւղական դպրոցներու մէջ: «Ժիւառ» ընդգէմ աղքատութեան, յետամնացութեան եւ անօթութեան», ինչպէս կը նկարագրէ նախագահ Մուշարաֆ:

Բախումը նաեւ տարածուած է դէպի Արեւմուտք: Ֆրանսա 1989ին ի վեր արգիլած է լաչակի գործածութիւնը պետական դպրոցներուն մէջ, որովհետեւ առանց լաչակի իսլամ աղջիկները կը նախատուին իսլամականներու կողմէ: Հոլանտայի տարածքին տեղափոխուած դասերու բազմացումը պետութիւնը մղած է հետաքննական արշաւի մը՝ պետական հովանաւորութիւն վայելող իսլամական 32 նախկին վարժարաններուն մէջ: Ապահովական պատասխանատուներու համաձայն, առնուազն 10 դպրոցներ նիւթական մեծ նպաստ կը ստա-



Միաժամանակ բրիտանացի եւ իսլամ ըլլալու հպարտութեամբ: Մանչեսթրի (Անգլիա) իսլամական Աղջկանց Ինքնորոգական վարժարանին աշակերտները երկրպագութեամբ եւ հասկացողութեամբ կը փորձեն ապրիլ աշխարհիկ ընկերութեան մը մէջ: Անոնց մեծամասնութիւնը կը ծրագրէ դառնալ իրաւաբան կամ բժիշկ:

ՏԱՐԵՅ ՄԱՐԴԸ ԵՒ ԾՈՎԸ

«ՏԸ ՆԻՒ ԵՆՐԸ ԹԱՅԱԶ» ԿԸ ԳՐԷ, ԹԵ ԱՆԳՐԵՒԵՒՄ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԳՐԱՔՆՆԵՆ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ՄԵՋԲԵՐՈՒԱԾ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ՎԵՐՆԱԳԻՐԸ Կ'ԱՎԱՐԿԵ ԸՄԻՆԿՈՒԵՅԻ «ՏԻ ՕԼՏ ՄԵՆ ԵՆՏ ՏԸ ՄԻ» ԿԻՊԱԿԻՆ

Սկիզբը ժան Հայֆէց կարծած է, թէ պարզապէս հանդիպած է տարօրինակութեան մը, որ սպրդած է անգլերէն լեզուի «Ռիմընթ» քննութեան մէջ, ինչպէս կը պատահի երբեմն:

Բառեր գեղչուած էին պարբերութեան մը, որ մէջբերուած էր գիրքէ մը, որուն ծանօթ էր Հայֆէց: Սակայն, երբ ան հանդիպած է փոփոխութեան ենթադրուած երկրորդ պարբերութեան մը, սկսած է մտածել՝ «Եթէ երկու պարբերութիւն փոփոխութեան ենթադրուած է, արդեօք աւելի մեծ է անոնց թիւը»: Արդեօք չարաշուք բան մը տեղի կ'ունենար:

Հետեւաբար, իր հետաքրքրութեանէն եւ քննութիւններուն նկատմամբ իր հակադրանքէն մղուած, ան հաւաքած է «Ռիմընթ» քննութիւններու վերջին հարցարանները: Այս քննութիւնը պարտաւոր են անցնել Նիւ Եորքի պետական երկրորդական վարժարանները աւարտած աշակերտները՝ վկայական ստանալու համար: Հայֆէց սկսած է բնագիրներուն հետ բաղադրել մէջբերուած պարբերութիւնները, որոնք կ'օգտագործուին հարցումներու համար:

Եւ ինչ որ յայտնաբերած է ան, գարմանք պատճառած է իրեն:

Գրական իր հոտառութեամբ, 41 տարեկան այս կինը, որ հիւսող է եւ երկրորդական վարժարան յաճախող աշակերտի մը մայրը, սկսած է ուսումնասիրել վերջին 3 տարիներու երկրորդական վարժարաններու անգլերէնի քննութիւններուն հարցարանները եւ ի յայտ բերած է, թէ մէջբերուած պարբերութիւններուն մեծամասնութիւնը, որ քաղուած է Այգաթ Պաշուրի Սինկլերի, Անթոն Չեխովի, Ուիլիըմ Մաքսուելի եւ այլ գրագէտներու գործերէն, գրաքննուած է եւ մաքրագտուած՝ ցեղային, կրօնական, ազգային, սեռային, մերկութեան, ոգելից ըմպելիի գործածութեան, նոյնիսկ՝ հայհոյանքի կամ սրբապղծութեան ամենադժգն ակնարկութիւններէն, որոնք գայրոյթ կրնային պատճառել: Աշակերտներ

պարտաւոր էին շարադրութիւն գրել եւ պատասխանել «մաքրագրուած» պարբերութիւններու վրայ հիմնուած հարցումներու: Հատուածներ, որոնք յստակ կերպով ներկայացուած էին իբրեւ հանրածանօթ գրագէտներու գործերը:

Օրինակ, Սինկլերի մէջ գործէն մէջբերուած հատուածէ մը ընդունած են մովսիսականութեան վերաբերող բոլոր նշումները, հակառակ որ անիկա հեղինակին գրականութեան կորիզը կը կազմէ: «Հրեայ կիներու մեծամասնութեան» ակնարկութիւնը հարցարաններուն մէջ վերածուած է «կիներու մեծամասնութեան», «նոյնիսկ լեհական դպրոցները փակուեցան» նախադասութեան ընդունած է «լեհական» բառը, ամբողջութեամբ զանց առնուած է հետեւեալ տողը: «Հրեաները հրեայ են եւ հեթանոսները՝ հեթանոս»:

Էնի Տիւրքիւն «Էն ամբիբըն չայլուհուտ» յուշագրութեան պարբերութեան մը մէջ գեղջուած են ցեղային այն բաժինները, որոնք կը նկարագրեն գրագէտին մանկութեան պտոյտները դէպի քաղաքին սեւամորթներով ընկալուած մէկ թաղամասին համարյայն գրադարանը, որուն միակ սպիտակամորթ այցելուին էր հեղինակը, թէեւ ան տուեալ հատուածին մէջ կը միտէր շեշտել իր տեսակէտները սեւամորթներու եւ ցեղային հարցերու նկատմամբ:

Միացեալ Նահանգներու կրթութեան նախարարութիւնը, որ կը պատրաստէ քննութիւնները, կ'ընդունի, թէ գրական գործերէ հատուածներ բարեփոխութեան կ'ենթարկուին յարգելու համար «գրային կրթութիւնները շրջանցելու ծառայող բարդ ուղեցոյցները», որոնք կը կիրարկուին տասնամեակներէ ի վեր, սակայն պարբերաբար վերատեսուութեան կ'ենթարկուին: Նախարարութեան պաշտօնական մէկ յայտարարութիւնը կ'ըսէ, թէ նախարարութիւնը պիտի չուզէր, որ ուսուցչական աշակերտ գէշ գրագր քննութեան ընթացքին:

Իր յայտնաբերումը կատարելէ ետք Հայֆէց կապ հաստատած է գրաքննութեան ենթադրուած հեղինակներուն կամ անոնց հրատարակիչներուն հետ եւ նկատած է, թէ անոնք գայրացած են, որ բառեր չընդունեն անոնց իրենց համաձայնութեան: Գրաքննութեան դէմ պայքարող եւ գրական հարցերով հետաքրքիր շրջանակներ, ինչպէս՝ Գրաքննութեան Դէմ Պայքարող Ազգային Համախոհութիւնը, Ամերիկացի Հրատարակիչներու Ընկերակցութիւնը, Նիւ Եորքի Քաղաքային Գրադարաններու Միութիւնը եւ Փէն ընկերակցութիւնը միասնաբար նման մը յղած են կրթութեան նախարարութեան յանձնակատար Ռիչըրտ Միլզի՝ պահանջելով վերջ դնել յայտարարութեան:

Վերոյիշեալ ընկերակցութիւնները հատուածներու վերախմբագրումը կը դատապարտեն իբրեւ մտաւորական անպարկեշտութիւն եւ տեսակ մը գրաքննութիւն, որ կ'աղաւաղէ գրական գործերու բովանդակութիւնն ու իմաստը: «Աշակերտներուն գրական ոչ ճշգրիտ պարբերութիւններու կարգաբերող հարցումներ ուղղելը կրթական չափանիշներ որոշելու խաթարուած ձեւ մըն է», կ'ըսեն նախկինները:

Գրական գործերէ հատուածներու բարեփոխութիւններուն տարողութիւնը մեծապէս կը տարբերի: Հարցարան մը Չեխովի «Տի ափ-հիլը» պատմութեան մէջ գեղջէ այն պարբերութիւնը, որուն մէջ հարուստ կին մը կորուսած զարգացող մը փնտրելու համար կը մերկացնէ տան մէջ սպասարկողները: Իսկ աշակերտներէն կը պահանջուի շարագրութիւն մը գրել մարդկային արժանապատուութեան վերաբերելով:

Ճան Հոյթի «Լընիլի օլ տը քայմ» գրութեան հատուած մը կտրուած է զանց առնելու համար այն պատճառները, թէ ինչ ո՛ւ Սուզուրի ջութակ մը նուագելու բացատրութիւնները կը տարբերին ծափոնի եւ Միացեալ

Նահանգներու մէջ: Սակայն աշակերտներուն հարց կը տրուի նոյնիսկ այդ տարբերութիւններուն վերաբերեալ:

Կարգ մը վերատեսուութիւններ նոյնիսկ անհեթեթ են: ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի արտասանած մէկ խօսքէն ջնջուած է Միացեալ Նահանգներու անվճար պարտքերուն նշումը, ինչպէս նաեւ՝ զինիլ եւ ոգելից ըմպելիներու գործածութեան ակնարկութիւնները: Քալիֆորնիոյ «գինի եւ ծովային ուսուցիչները» գովելու փոխարէն՝ ան կը գովէ միայն «Քալիֆորնիոյ ծովային ուսուցիչները»:

Երբ «Ռիմընթ»ի հարցարանը կը մէջբերէ Քերըլ Սալիսի «Մատրըք Էնտ տոքթըր» պատմութեանը, աղջիկ մը այլեւս չ'ըսեր, թէ իր մօտ «գինետուն գնաց», այլ պարզապէս՝ «դուրս գնաց»:

Էննեսթօ Կալարայի «Պարիս Կոյ» պատմութեան մէջ «կրիմլօ լէյտի» (Հարաւային Ամերիկայի մէջ ամերիկացիներու ու անգլիացիները իբրեւ օտարական բնորոշող բառ) կը վերածուի «ամերիկեան լէյտի»: «Ոսկրոտ» տղայ մը կը նկարագրուի իբրեւ «նիհար», իսկ «գէշ» տղայ մը՝ «ծանր կշիռով» անկաններ, զորս Ամերիկայի կրթութեան նախարարութիւնը նուազ վերաւորական կը համարէ:

«Երբ սահկա տեսայ, մտածեցի, թէ մարդիկ խնայարար են», կ'ըսէ Հայֆէց:

Հայֆէցի փնտրողներուն շարժառիթը մասամբ անոր վերապահութիւնն էր քննութիւններուն նկատմամբ, որոնց արժէքն ու ազդեցութիւնը երկար ժամանակէ ի վեր վէճի նիւթ է, թէեւ ան կ'ըսէ, թէ միշտ ենթադրած է, որ քննութիւններուն պատրաստութիւնը տեղի կ'ունենայ ճշգրիտ ձեւով: Անոր աղջիկը՝ Ռոզա կը յաճախէ Հրպրը Աքատըրի Լապորթի երկրորդական վարժարանը՝ Մանհատթենի մէջ: Վարժարանը կը պատկանի 32 դպրոցներէ բաղկացած ցանցի մը, ուր կը յաճախեն դաստիարակող աղքատ աշակերտներ, եւ անոնց կրթական պատասխանատուները դէմ են «Ռիմընթ»ի քննութիւններուն:

Ծար.ը՝ էջ 8

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՆՅԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՀԱՅ ԴԱՏԻ ՄԵԾ...

Ծարուհակուած՝ 5րդ էջէն

յօդուածներէն բացի, անհրատարակած էր նաեւ երկու գիրքեր՝ «Արեւելեան հարցը» (1898ին) եւ «Հայաստանի համար» (1902ին): Վերջապէս, Փիեռ Քիլյառ ընդհանուր քարտեզարէն էր Մարդկային Իրաւանց Պաշտպան Լիկային, որուն նախագահն էր Ֆրանսիս տը Փրեսանսէ:

նախօսէ հանրային բնութիւնը, անսահման խանդավառութիւն կը ստեղծէ իր շուրջը: 1909ի Փետրուարի սկիզբը Կ. Պոլսէն կը ճամբորդէ Իգմիր եւ հոն ալ կը ստեղծէ միեւնոյն խանդավառութիւնը:

Փարիզի մէջ, վիրաբուժական գործողութեան մը պատճառով աչքերը կը փակէ 23 Յունուար 1912ին, 48 տարեկան հասակին:

Փիեռ Քիլյառ իր հանրային - քաղաքական գործունէութեան մէջ շատ սերտ կապեր ունեցած է Հ. Յ. Դաշնակցութեան եւ անոր ղեկավարներուն հետ, Փարիզ, ժընն, Կ. Պոլիս եւ այլուր: Ան օգտագործած է այդ կապերը աւելի մօտէն ճանչնալու համար հայ ժողովուրդը եւ անոր յեղափոխական գաւազանները՝ ուղղութիւն տալու համար իր աշխատանքներուն: Այնքան սերտ եղած են կապերը, որ Փիեռ Քիլյառ Հ. Յ. Դ. Բիւրոյի մասնաւոր հրահանգով մասնակցած է Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովին, որ տեղի ունեցած է Սոֆիայի մէջ, 1903ին (այդ ժողովին ներկայ գտնուած է նաեւ ուսանական բանակի նշանաւոր հայ գործարար Լորիս Մելիքով):

Սահմանադրութեան վերահաստատումէն քիչ ետք, 1908ի վերջերս, Փիեռ Քիլյառ իր կողմէ՝ Մարիի հետ կը ճամբորդէ Կ. Պոլիս եւ այնտեղ կը մնայ քանի մը ամիս: Հոն եւ այլուր ան կ'արժանանայ համահայկական գուրգուրանքի եւ երախտագիտութեան: Կը բա-

նախօսէ հանրային բնութիւնը, անսահման խանդավառութիւն կը ստեղծէ իր շուրջը: 1909ի Փետրուարի սկիզբը Կ. Պոլսէն կը ճամբորդէ Իգմիր եւ հոն ալ կը ստեղծէ միեւնոյն խանդավառութիւնը:

Փարիզի մէջ, վիրաբուժական գործողութեան մը պատճառով աչքերը կը փակէ 23 Յունուար 1912ին, 48 տարեկան հասակին:

Փարիզի մէջ, վիրաբուժական գործողութեան մը պատճառով աչքերը կը փակէ 23 Յունուար 1912ին, 48 տարեկան հասակին:

Փարիզի մէջ, վիրաբուժական գործողութեան մը պատճառով աչքերը կը փակէ 23 Յունուար 1912ին, 48 տարեկան հասակին:

Փարիզի մէջ, վիրաբուժական գործողութեան մը պատճառով աչքերը կը փակէ 23 Յունուար 1912ին, 48 տարեկան հասակին:

Փարիզի մէջ, վիրաբուժական գործողութեան մը պատճառով աչքերը կը փակէ 23 Յունուար 1912ին, 48 տարեկան հասակին:

Հայ ժողովուրդի հատարած բարեկամին մահէն 11 օր ետք մեծ սգահանդէս մը տեղի կ'ունենայ Բերայի մէջ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութեամբ, սգահանդէսին կը բանախօսեն դաշնակցական ղեկավարներ՝ է. Ակնուներ, Ստեփան, Վասմէանք եւ ուրիշներ, իսկ անմահ Կոմիտաս Վարդապետ կը մասնակցի երգով մը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՆԱԶԱՐԷԹ ԳԵՈՐԳԵԱՆԻ մահուան Ա. տարիլիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Յունիս 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԱՐԳԵԻ ԶԵՇԻՇԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Յունիս 2002, Ֆանարի Ս. Մատրան մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՆՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Յունիս 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԵՐԺԻՆ ԽԱՆԿԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Յունիս 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՆԻՍ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Յունիս 2002, Նոր Մարաշի Սրբոց Զուռահից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

«ԱԶՂԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶՂԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ...

Ծարուհակուած՝ 6րդ էջէն

խանդավառ՝ էլիա Սիւլէյման յաջորդ տարին կը ըրարտագրուին խոհանոցայտարատէ վաւերագրական այլ ժապաւէն մը՝ «Թախիլալ պիտուսիլաթը լիթիալ» անունով, որ յոյնական մրցանակներու կը տիրանայ: Այս ժապաւէնին եւ անոր յաջորդութեան մասին խօսելով՝ իրանցի բեմադրիչ Ապաս Քիարաթամիի ոճին: «Կը սիրեմ յանպատրաստից ոճը, որ շարժումի մեծ դերու թիւններ կ'ընծայէ, թէեւ ամէն ինչ կանխաւ կ'երեւակայեմ: Դասական բեմագրութիւնը կը ըմանի հարցաքննութեան տրամաբանութեան, ինչ որ, ըստ ինծի, կապ չունի շարժապատկերին հետ: Տիրապետող այս ոճը ամբողջովին կը մերժեմ, զիս կը ձանձրացնէ, անկայուն իրականութիւնը կը զննէ», կը բացատրէ ան:

Յուսանք, որ լիբանանցի հանդիսատեսը առիթ կ'ունենայ շարժապատկերի սրահներուն մէջ տեսնելու «Ճիշդ իր ուղածը իրագործող» պաղեստինցի այս բեմադրիչին ոչ միայն «Նատոն իլախիա»ն, այլ նաեւ՝ նախորդ ժապաւէնները:

ՏԱՐԵՅ ՄԱՐԳԸ ԵՒ ...

Ծարուհակուած՝ 7րդ էջէն

Հարցարանի մը մէջ միայն մէկ անգամ կախման կէտ օգտագործուած է նշելու համար, թէ որոշ յապուածներ կատարուած են, կ'ըսէ Տարեյի: Այսպէս քննութիւններուն մէջ ոչինչ կ'ապացուցէ բառերու փոխարինումը: Ամերիկայի կրթութեան նախարարութեան կրթական ծրագրներուն, ուսուցման ձեւերու եւ ուսման հաստատութեան օգնական յանձնակատար Ռոզըն Ծրֆայի կ'ըսէ. «Կը կրճատենք եւ կը շրջենք հաստատներ՝ գանձնք յարմարցնելու համար քննութեան»: Փոփոխութիւնները կը կատարուին յարգելու համար «զգայնութիւնները շրջանցելու ծառայող ուղե-

պէսզի յստակօրէն վերարտագրուին խոհանոցային կուլիները...»: Այս ժապաւէնին մէջ անոր օգտագործած անմիջականութիւնը եւ յանպատրաստից ներկայացման ձեւը քննադատներուն կողմէ նմանցուած է իրանցի բեմադրիչ Ապաս Քիարաթամիի ոճին: «Կը սիրեմ յանպատրաստից ոճը, որ շարժումի մեծ դերու թիւններ կ'ընծայէ, թէեւ ամէն ինչ կանխաւ կ'երեւակայեմ: Դասական բեմագրութիւնը կը ըմանի հարցաքննութեան տրամաբանութեան, ինչ որ, ըստ ինծի, կապ չունի շարժապատկերին հետ: Տիրապետող այս ոճը ամբողջովին կը մերժեմ, զիս կը ձանձրացնէ, անկայուն իրականութիւնը կը զննէ», կը բացատրէ ան:

Յուսանք, որ լիբանանցի հանդիսատեսը առիթ կ'ունենայ շարժապատկերի սրահներուն մէջ տեսնելու «Ճիշդ իր ուղածը իրագործող» պաղեստինցի այս բեմադրիչին ոչ միայն «Նատոն իլախիա»ն, այլ նաեւ՝ նախորդ ժապաւէնները:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Description of services and corresponding prices in Armenian Lira (լ.ն.).

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵԹՈՒՂԹԵՐ

Table with 2 columns: Service type and price per unit.

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ) Այս իրիկուն պիտի կազմակերպէր աղուոր երեկոյ մը, որուն ներկայ պիտի ըլլան ձեր հարազատներն ու բարեկամները: Երեկոյը այնքան զուարթ պիտի անցնի, որ պիտի ուզէ կրկնել: ☆ ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Աշխատանքի մարզին մէջ պիտի ունենաք պաշտօնի բարձրացում, ինչ որ ձեզ պիտի դարձնէ աւելի եռանդուն եւ գործունէայ: ☆ ԵՐԿՐՈՒՆԵԱԿ (22 Մայիսէն 23 Յունիս) Ձեր գործին վերաբերել պիտի ունենաք տեղափոխութեան հարց մը, որ ձեզ պիտի մղէ նոր նախաձեռնութեան եւ յաջողութեան: ☆ ԽԵՅՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յունիս) Ծնորդի ձեր ձեռնարկութեան, տնտեսական իմաստով ամիսը պիտի փակէ լաւ ձեւով, ինչ որ չէիք պղծկայել: Նոյն թափով շարունակեցէր նաեւ յաջորդ ամիս: ☆ ԱՌԻԻԻՎ (24 Յունիսէն 23 Օգոստոս) Ձեր բնածին հեղինակութիւնը երբեմն շատ խիստ կ'ըլլայ մանաւանդ ձեզ մը թոյլ անձերու հանդէպ: անոնք դժուարութիւն ունին անմիջապէս բարձրելու ձեր բացատրութիւնները: Այդպիսիներուն հետ քիչ մը մեղմ վարուեցէր: ☆ ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ծառաքը վերջ պիտի գտնէ լաւ տրամադրութեամբ, ձեր աշխատանքի մէջ, ուր յարուածութիւնը պիտի մեղմանայ եւ ամէն մէկը ինքզինք պիտի զգայ զուարթ: ☆ ԿԵԻՌ (24 Սեպտեմբերէն 23 Նոյեմբեր) Եթէ ազատ էր որոշում տալու՝ սիրային ձեր հարցերը կարգադրելու, այսօր պիտի ունենաք պատեհութիւնը հանդիպելու նոր ծնող սիրոյ կամ՝ վերջուտի վերանորոգուող սիրոյ: ☆ ԿԱՐԻՃ (24 Նոյեմբերէն 23 Նոյեմբեր) Ընտանեկան յարկի տակ մտահոգութիւն մը կը նշուի ձեզ, սակայն մի՛ մտածէք տան անդամները իրարու հետ հաշտեցնելու: Հարցերը իրենք իրենց բարոյ լուծում կը գտնեն, դուք անհոգ եղէր: ☆ ԱՆՆԱՆԱՌ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Եթէ կարելիութիւն ունիք, գացէր եւ քիչ մը երկար ժամանակով հանգստացէր: Պիտի վերադառնաք շատ ուրախ եւ աշխուժ: ☆ ԱՅԾԵՆՂԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Ունեիք ծախսեր, որոնց հաշուեցոյցը ձեր ենթադրածէն շատ նուազ պիտի ըլլայ: Ուրեմն, ստեղծուած խնայողութիւնը լաւ ձեւով պահեցէր: Օրը քանակաւոր է: ☆ ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) Դարձեալ շատ լաւ օր մը: Այն բոլոր հարցերը, որոնք կը վերաբերին արտաքին աշխարհին հետ ձեր յարաբերութեան, պիտի ընթացան շատ հեզասահ: ☆ ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) Ձեր կենտրոնը շատ հաճելի պիտի ըլլայ այսօր, որովհետեւ ձեր աշխատանքները կանոնաւոր կատարած էք եւ ամէն հարց լուծելի է:

Panasonic ԵՆՈՒՏԵՍԻԼ ԸՆՈՒՏԵՍԻԼ Տարուհակուած՝ 7րդ էջէն


ԽԱՉԲԱՈՒ ԹԻԻ 5181

Table with 11 columns and 11 rows for a 5181 lottery draw. Includes columns for numbers 1-11 and a grid of numbers.

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՊՐԱՅԻՆ - ԳԵՐՄԱՆԻԱ ՃԱԿԱՏՈՒՄԻՆ ԻՐԱԲԱՐԱՐԸ՝ ԻՏԱԼԱՅԻ ԲՈԼԻՆԱ

ՖԻՖԱն Երեկ լայնեց, թե՛ լայնաչիկ Կիրակի, 30 Յունիսին Եոթհամայի մէջ (Ճափոն) տեղի ունենալիք Պրայիլ - Գերմանիա աւարտական մրցումին իրաւարար պիտի ըլլայ իտալացի Փիերլուիճի Բոլինա, որ իրեն օգնականներ պիտի ունենայ (կողմի իրաւարարները) Լէֆ Լինպերկը (Շուէտ) եւ Ֆիլիպ Շարփը (Անգլիա):



Բոլինա

42 տարեկան «ճաղատ» Բոլինայի նշանակումը այս կարեւոր մրցումին շատեր արդէն իսկ կ'ակնկալէին, որովհետեւ վերջին ինչգ տարիներուն ան փաստած էր, որ կը մնայ աշխարհի լայագոյն իրաւարարը, մանաւանդ որ ան անցեալ Յունարին ՖԻՖԱին կողմէ չորրորդ անգամ ըլլալով ընտրուած էր իրեն այդպիսին:

Բոլինա դիպուածով իրաւարար եղած է, երբ իր խմբակիցներուն կատարած փորձ-մրցումներուն ընթացքին իրաւարարութիւն կ'ընէր, որովհետեւ ան երիտասարդ տարիքին վիրաւորուելով, չէր կրցած անոնց կատարած մրցումներուն մասնակցիլ:

Ան առաջին անգամ ըլլալով իտալիոյ ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան (Քայլիո) մրցումի մը իրաւարարը եղած է 15 Դեկտեմբեր 1991ին:

Աւարտական այս մրցումին Բոլինայի իրաւարար նշանակուիլը բաւական կը հանգստացրէ ՖԻՖԱի պատասխանատուները, որոնք այն մտավախութիւնը ունին, թէ ամէնէն պատիկ սխալին՝ պիտի քննադատուին, որուամ ըլլալով որ նախորդող մրցումներուն իրաւարարական աշխարհը բացթողումներ եղան եւ ստոր գլխաւոր ու միակ պատասխանատուն նկատուեցաւ ՖԻՖԱն, որ խստի քննադատուեցաւ ֆութպոլի շրջանակներուն մէջ:

ՀԱՅ ԱՒԵՏ. Փ. ԵՒ Է. ԹՈՐՈՍԵԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳՎԱՐԺԱՐԱՆ
2002-2003 ՏԱՐԵՃՐԶԱՆԻ
ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Շայ Աւետ. Թորոսեան վարժարանը արդէն սկսած է յաջորդ տարեշրջանի նախնական արձանագրութիւնը ներկայ աշակերտներուն համար, եւ այդ կերպի մինչեւ Յուլիս 30:

Նորեկ աշակերտներուն արձանագրութիւնը պիտի կատարուի Յուլիս ամսուան ընթացքին ամեն օր ժամը 9:00 12:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Վերամուտին, արձանագրութիւնը կ'ամբողջանայ Սեպտեմբեր 16 27, ինչ եւ նոր աշակերտներու համար:

Նորեկ աշակերտները ներկայացնելու են. Նախորդ տարուան վիճակագրոյցը Նախորդ տարուան աշակերտին պետական քիւր, վաւերացուած Երկու լուսանկար Անձնագրողի լուսապատճեն Բարի վարուց վկայագիր նախորդ վարժարանէն

Բողոքը դասարան կ'ընդունուին երկու տարեկան ինը ամսու երէսաներ: Գիրքերու եւ համազգեստներու վաճառքը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 16 27: Վերամուտի թուական Պրեզի 16 Սեպտեմբեր

1- 8 կարգեր - 30 Սեպտեմբեր
Մանկապարտեզ - 2 Շոկտեմբեր

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄՈՆՏԻԱԼԵՆ ԱՐԶԱԳԱՆԳՆԵՐ

ՄԵՔՍԻՔՍԻ ֆութպոլի ազգային խումբին խմբապետը՝ Ռաֆայէլ Մարքէլ, որ անցեալ 17 Յունիսին Միացեալ Նահանգներու դէմ տեղի ունեցած մրցումին 88րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացած էր, երէկ ՖԻՖԱին կողմէ չորս մրցումով կախակայուեցաւ:

Բացի այդ մէկէն, ան ուր հապար պուրջերիական ֆրանք (շուրջ՝ 5400 ամերիկեան տոյար) տուգանքի ենթարկուեցաւ, իր կատարած արարքին համար. ան գլխու պորտեր հարուած մը տուած էր ամերիկացի Քոպի ճոնպի Փարակուէյի Ռոպէր Արունա, երկու մրցումով կախակայուեցաւ եւ ինչգ հապար պուրջերիական ֆրանք (շուրջ՝ 5400 ամերիկեան տոյար) տուգանքի ենթարկուեցաւ, 15 Յունիսին Գերմանիոյ դէմ տեղի ունեցած մրցումին, առանց գնդակի Միքայէլ Պայաքի հարուածած ըլլալուն համար:

● ԳԵՐՄԱՆԻԱՅ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱՆ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ
Միքայէլ Պայաքի փոխարէն շատ հաւանաբար դաշտ ներկայանայ Ենս Ժերմին, որ պիտի ստանձնէ Տիեքմար Համանի պաշտօնը (յետասպահ), իսկ Համան՝ Պայաքի պաշտօնը (փլէյմէյթը):

● ԳԵՐՄԱՆԻԱՅ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱՆ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ
Միքայէլ Պայաքի փոխարէն շատ հաւանաբար դաշտ ներկայանայ Ենս Ժերմին, որ պիտի ստանձնէ Տիեքմար Համանի պաշտօնը (յետասպահ), իսկ Համան՝ Պայաքի պաշտօնը (փլէյմէյթը):

Միքայէլ Պայաքի փոխարէն շատ հաւանաբար դաշտ ներկայանայ Ենս Ժերմին, որ պիտի ստանձնէ Տիեքմար Համանի պաշտօնը (յետասպահ), իսկ Համան՝ Պայաքի պաշտօնը (փլէյմէյթը):

● ԳԵՐՄԱՆԻԱՅ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱՆ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ
Միքայէլ Պայաքի փոխարէն շատ հաւանաբար դաշտ ներկայանայ Ենս Ժերմին, որ պիտի ստանձնէ Տիեքմար Համանի պաշտօնը (յետասպահ), իսկ Համան՝ Պայաքի պաշտօնը (փլէյմէյթը):

● ԳԵՐՄԱՆԻԱՅ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱՆ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ
Միքայէլ Պայաքի փոխարէն շատ հաւանաբար դաշտ ներկայանայ Ենս Ժերմին, որ պիտի ստանձնէ Տիեքմար Համանի պաշտօնը (յետասպահ), իսկ Համան՝ Պայաքի պաշտօնը (փլէյմէյթը):

● ԳԵՐՄԱՆԻԱՅ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱՆ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ
Միքայէլ Պայաքի փոխարէն շատ հաւանաբար դաշտ ներկայանայ Ենս Ժերմին, որ պիտի ստանձնէ Տիեքմար Համանի պաշտօնը (յետասպահ), իսկ Համան՝ Պայաքի պաշտօնը (փլէյմէյթը):



«ԱՉԳԱԿ»Ի ՄՈՆՏԻԱԼԵՆ ՄՐՅԱՆՔ

- 1.- Ո՞վ պիտի ըլլայ Շաբաթ, 29 Յունիսին, Թաէկուի մէջ (Հարաւային Բորեա) տեղի ունենալիք Հարաւային Բորեա - Թուրքիա Յրդ դիրքի մրցումին յաղթականը: (5 նիշ)
- 2.- Ի՞նչ պիտի ըլլայ մրցումին արդիւնքը: (5 նիշ)
- 3.- Մրցումին առաջին կողմ ե՞րբ պիտի նշանակուի. Ա. Կիսախաղի՞ն, Բ. Կիսախաղի՞ն, թէ՛ երկարաձգման ընթացքին: (10 նիշ)
- 4.- Մրցումը փենսիթիներո՞վ պիտի աւարտի, թէ ոչ: (5 նիշ)
- 5.- Որե՛կ խումբ կարմիր քարտ պիտի ստանայ: Եթէ այդ, նշել խումբին անունը միայն: (5 նիշ)

Անուն
Մականուն
Հեռաձայն

Սոյն մրցանքին կտրօնները «Ազդակ»ի խմբագրատուն պետք է հասած ըլլան առաւելագոյնը՝ մինչեւ Շաբաթ, 29 Յունիս, կէսօրէ ետք ժամը 13:00ին:

Առաւելագոյն նիշ ապահովող մասնակիցը կ'ըլլայ յաղթականը: Հաւասար նիշերու պարագային, տեղի կ'ունենայ վիճակաձգութիւն:

Մրցանքին իրենց մասնակցութիւնը չեն կրնար բերել «Ազդակ»ի պաշտօնէաները:

- 1.- ԱՃՃԵԱՆ ճամբորդական հաստատութեան կողմէ տրամադրուած Դամասկոս - Սալիսույա - Մաալույա 2 իրաւունք երթուղարձի տուն մը:
- 2.- JEPJA վաճառատան կողմէ տրամադրուած՝ տղամարդու շապիկ մը:

ԹԵՆԻՍ. ՈՒՄՊՈՒՆԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ

Ուիմպլերնի թենիսի մրցաշարքի Բ. հանգրուանի մրցումներուն, երէկ հայաստանցի Սարգիս Սարգսեան 6-3, 6-0 եւ 6-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք 17րդ դասուած գերմանացի Ռայնըր Շիուրլըն, դուրս մնաց մրցաշարքէն:

Սպանացի իտալացի Ֆեռնանդո (դասուած՝ 9րդ) կրած պարտութիւնը սակայն աւելի մեծ անակրկալ մըն էր, այդ ալ անծանօթ ձէֆ Մորիարէն: Ամերիկացի պետք ունեցաւ միայն երեք սէթի, պարտութեան մատուցելու համար Ֆեռնանդո, 6-3, 7-5 եւ 7-6 արդիւնքով:

Աղջկանց Բ. հանգրուանի մրցումներուն, Էլենա Լի-խովցեա (Ռուսիա) իր կարգին յաղթական մը արձանագրեց մրցաշարքէն դուրս ձգելով Տրդ դասուած պելճիքացի Բիմ Բիլիքըրը, 7-6 եւ 6-2 արդիւնքով յաղթական մը արձանագրելէ ետք:

- Ստորեւ՝ Բ. հանգրուանին արձանագրուած երկու ան կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.
- ՏԳԱՔ**
18.- Սիէնի Շալթէն (Հոլանտա) - Մայքըլ Չանկ (Մ. Ն.) 7-6, 6-3, 4-6 եւ 6-1
Ուէյն Ֆերէյրա (Հար. Ափրիկէ) - 30.- Իվան Լիուպիչիչ (Սերուաթիա) 6-4, 6-4, 3-6, 4-6 եւ 6-3
Ֆելիսիանօ Լոփէյ (Սպանիա) - 10.- Կիլերմօ Քանսա (Արժ.) 4-6, 2-6, 7-6, 7-5 եւ 10-8
1.- Լէյթըն Հուիթ (Աւստրալիա) - Կրեկորի Քարալ (Ֆրանսիա) 6-4, 7-6 եւ 6-2
Ատրիան Վուանէա (Ռուս.) - 25.- Յապրիս Սանթրօ (Ֆր.) 6-2, 6-4, 3-6 եւ 6-3
- ԱՂՁԻԿՆԵՐ**
4.- Մոնիթա Սելէշ (Մ. Ն.) - Ռոպանա Նեֆա - Տր Լուս Ռիոս (Փարակուէյ) 6-4 եւ 6-0
1.- Վինչո Ուիլիքս (Մ. Ն.) - Վիլիամս Ռուանօ Փասքուալ (Սպան.) 6-3 եւ 6-1
Բոնչիթա Մարթինէյ (Սպան.) - 17.- Փէթի Ենայտըր (Չուիլիքիա) 6-1 եւ 6-3
6.- Ճասթին Հենի (Պելճիք) - Տենիսա Շլապրովա (Չեխիա) 6-2 եւ 7-5
Միլիան Քասանովա (Չուիլիք) - 29.- Պարպարա Եթը (Աւստրիա) 6-3, 3-6 եւ 6-3
10.- Սիլվիա Ֆարինա Էլիա (Իտ.) - Պարպարա Ռիւրըր (Գերմանիա) 6-3 եւ 6-2

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ

1. ԱՐԵՒՏԱԿԱՆԱՅԱՆ
Վան - Մուշ - Սասուն - Խարբերդ - Ուրֆա...
ճաւ Արարատ եւ Անի
Յուլիս 18-28 (10 օր) \$590 (Full Board)

2. ՈՐԻՅԱ - ՉԷՅԹՈՒ - ՏԻԳՐԱՆԱԿԵՐ
Կարմուռ - Խարբերդ - Մարաշ - Արապ - Քիլիս
Օգոստոս 5-10 (5 օր) \$290 (Full Board)

Արձանագրութեան համար դիմել՝ 03-283347

**ՏԱՐԵԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ
ՔԵՐՍԷՍ**

Կազմակերպութեամբ
Ը. Յ. Դ. ԼԻՔԱՆՆԻ
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ
ԹՈՒԿԱՆ՝ ՅՈՒԼԻՍ 5, 6, 7, 2002:

ՎԱՅՐ՝ Պորձ Կամուտի Աղասարգիսեան փարքին, Մասքըր Մոլին կից:

ԺԱՄ ԱՈՒԲՕՏԵԱՆ 10:00ԷՆ
ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ 11:00:
Մասնակցութեամբ՝

Coca-Cola

«ԱՉԳԱԿ»Ի ՄՈՆՏԻԱԼԵՆ ՄՐՅԱՆՔ

- 1.- Ո՞վ պիտի ըլլայ Կիրակի, 30 Յունիսին, Եոթհամայի մէջ (Ճափոն) տեղի ունենալիք Գերմանիա - Պրայիլ աւարտական մրցումին յաղթականը: (5 նիշ)
- 2.- Ի՞նչ պիտի ըլլայ մրցումին արդիւնքը: (5 նիշ)
- 3.- Որո՞նք (կամ ո՞վ) պիտի ըլլան կու նշանակողները: (10 նիշ)
- 4.- Ո՞վ պիտի հանդիսանայ Մոնտիալիս կողմըրըրը (կամ՝ կողմըրըրները): (10 նիշ)
- 5.- Ո՞վ պիտի նշանակէ 2002ի Մոնտիալիս վերջին կողմը: (10 նիշ)

Անուն.....
Մականուն.....
Հեռաձայն.....

Սոյն մրցանքին կտրօնները «Ազդակ»ի խմբագրատուն պետք է հասած ըլլան առաւելագոյնը՝ մինչեւ Շաբաթ, 29 Յունիս, կէսօրէ ետք ժամը 13:00ին:

Առաւելագոյն նիշ ապահովող մասնակիցը կ'ըլլայ յաղթականը: Հաւասար նիշերու պարագային, տեղի կ'ունենայ վիճակաձգութիւն:

- Սոյն մրցանքին չեն կրնար մասնակցիլ «Ազդակ»ի պաշտօնէաները:
- Յաղթականը կը շահի.
- 1.- ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ հաստատութեան կողմէ տրամադրուած **Campomatic** վաճառանիշով մեքենայ մը:
 - 2.- **OPTIMAX** հաստատութեան կողմէ տրամադրուած յայտնի վաճառանիշով տղամարդու ակնոց մը:
 - 3.- ԱՂԱ ԶԷԷԷԵԱՆ հաստատութեան կողմէ տրամադրուած տարեղարձի յատուկ վիտօ - երիկ մը:

